

ՊՈԼՍԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ,
ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴՈՒՌԸ
ԵՒ ԱՅԼ ԲԱՆԵՐ

(30 Սեպտեմբեր 1895)

ԼԵՒՈՆ ՎԱՐԴԱՆ

4.

Այս բոլորէն ետք՝ այժմ անհրաժեշտ է տալ մէկ պատուժը Հնչակեան Կուսակցութեան կողմէ կազմակերպուած պոլսահայութեան դէպի Բարձրագոյն Դուռ երթին եւ անոր պատրաստութեան:

Ինչպէս ցոյց կու տան փաստերը՝ ամիսներու հետեւողական եւ ճիգ պահանջող աշխատանքով մըն էր որ պատրաստուեր էր զետիներ, որուն վրան պիտի կանգնէր շարժումը: Իրաւ էր, որ այդ պատրաստութիւնն ունեցաւ կրօնական եւ եկեղեցական քղամիջ, որուն անուղղակի կերպով թիկունք կանգնելու եկաւ Յովհաննէս Շահնազարի Հայրեմիքը իր պատասխանատու խմբագիր Արփիար Արփիարեանով, եւ գործօն աշխատակիցներ Լեւոն Բաշալեանով եւ Երուանդ Օտեանով: Իրականութեան մէջ՝ այդ օրերուն Հայրեմիքը ձեւով մը անպաշտօն խօսնակն էր Հնչակեանութեան, եւ անոր անխառն հովանաւորութիւնը կը վայելէր Իզմիրլեան Պատրիարքը, որ զահ բարձրացաւ 7 Դեկտեմբեր 1894-ին՝ հակառակ սուլթանական ընդդիմութեան: Իսկ Պատրիարքարանէն ներս ժողովական աթոռները զրուեր էին Հայրեմիքի թիկունքը վայելող ներկայացուցիչներ, որոնց մէջ, Արսէն Կիտուրի բառերով՝ «ազգային մեծ դէմքեր էին եւ ազգային շարժումին հետ համաբայլ կ'ընթանային» Գաբրիէլ Նորատունկեանը, Տիգրան Խան Քելեկեանը եւ Տոթթ. Նազարէթ Տաղաւարեանը: Աւելին՝ Բերայի եկեղեցիին թաղականութիւնն ամբողջութեամբ կու գար Հայրեմիքի մարդերէն⁽¹¹²⁾:

Նախապատրաստական այս կազմակերպումէն ետք էր որ ոտքի ելաւ Հնչակեան Կուսակցութիւնը Պոլսոյ մէջ:

Այսօր ձեռքի տակ կան ցոյցի կազմակերպումին եւ անոր ընթացքին հետ առընչուող քանի մը յուշագրութիւններ անոր կազմակերպիչներուն իսկ կողմէ: Ըստ Միհրան Տամատեանի՝ «այդ շրջանին

4. Պոլսոյ Հնչակեան Կուսակցութիւնն ունէր Վարչական Մարմին մը⁽¹¹³⁾, որուն անդամներն էին [Էւոն Մկրտիչեան|ը], Արփիար Արփիարեան|ը], Սուրէն Սուրէնեան|ը] եւ ուրիշներ, որոնց կը գործակցէր Կեդրոնի ներկայացուցիչ Արտաւազդ Օհանջանեան|ը] (Արթիւր), եւ Գործադիր Մարմին մը⁽¹¹⁴⁾: Բայց այս երկու մարմիններէն զատ կային բանտերէն արձակուած հին գործիչներ՝ Անտոն Ռըշտունի|ն], Մարգար Վաճեան|ը] (Անտոն⁽¹¹⁵⁾ Ասլանեան) եւ Միհրան Տաճատեան|ը], որոնց հետ սերտ յարաբերութեան մէջ էր Կեդրոնի ներկայացուցիչ Արտաւազդ Օհանջանեանը, ինքն ալ բանտէ|ն] արձակուած Հնչակեան գործիչ մը: Յոյցը կատարելու որոշումը սրուեցաւ Կեդրոնի ներկայացուցիչին, Վարչական Մարմինին եւ երեք հին գործիչներուն միասին խորհրդակցութեամբ: Իսկ անոր գործադրութիւնը յանձնուեցաւ մասամբ Գործադիր Մարմնոյն եւ մասամբ [ալ] երեք հին գործիչներուն: Գալով բողոք-պահանջագիրին՝ անոր պատրաստութիւնը Ֆրանսերէն եւ հայերէն յանձնուեցաւ Մ[իհրան| Տաճատեանին⁽¹¹⁶⁾: Այս վերջնոյս պատրաստած պահանջագիրը Խարախանեան եւ|ի]ւ|կոպոսին| միջոցաւ Իզմիրլեան պատրիարքին հաւանութեան ենթարկուած էր⁽¹¹⁷⁾:

Շա՛տ է խիտ եւ հակիրճ՝ տուածը Տաճատեանին, մինչդեռ 30 Սեպտեմբերի ցոյցին ղեկավարներէն Կարապետ Սահակեանն իր յուշերուն մէջ կու տայ շա՛տ աւելին: «Կ. Պոլսոյ Կեդր[ոնական] Վարչութիւնը»՝ կը գրէ անիկա 1932-ին՝ «ցոյցը ղեկավարելու համար երկու հոգի որոշած էր. — Ատովմ Արսլանեան|ը] եւ Անտոն Ռշտունի|ն], բանտէն նոր ազատած երկու նախկին գործիչներ, որ[ոնք] նոյն ատենուայ հնչ[ակեան] փայլուն աստղերն էին: Խումբերու մէջ մտնելով [շարժումը] կազմակերպելու համար Գործադիր Մարմնոյն կողմէ որոշուեցաւ Վաղինակ|ը] (Մ[արգար] Հացագործեան), Վահագն Յարութիւնեան|ը], Արշաւիր Կամսարական|ը], Հաճի Սեղրակ|ը] (Արծրունին) եւ այս տողերը գրողը, որ միաժամանակ ցոյցին պարագլուխ որոշուեցաւ:

«Յոյցը պիտի կատարուէր հետեւեալ պարագաներու տակ: Բողոքախառն պահանջագիր մը պիտի մատուցուէր Բարձրագոյն Դրան, այդ պիտի տարուէր 800-1000 հոգիէ բաղկացած գաւառացիներէ:

«Սակայն ցոյցի մասին երկու կարծիք կար. մին՝ խաղաղ եւ անզէն ցոյց մը ընել, միւսը՝ զինեալ եւ ազմկալից: Կոչուած անձերու առաջին խորհրդակցական ժողովը տեղի ունեցաւ Ղալաթիոյ եկեղեցիին մէկ մթին խուցին մէջ, ուր ներկայ էին Անտոն Ռշտունին, Վաղինակ|ը], Վահագն|ը], այս տողերը գրողը եւ երկու անձանօթներ:

«Զինեալ բար Անտոն Ռշտունի ըմբռնումով տարբեր բացատրուեցաւ տրուած հրահանգէն, որ երկարածիգ վիճարանութեան պատճառ դարձաւ: Ան արտայայտուեցաւ թէ «կառավարութեան գործածելիք ոյժը փողոցին ջուրերը բանալով ցուցարարները պիտի թրջէ որ ցրուին, այդ պարագային ձեր տուները հացի դանակներ չկա՞ն, յարձակելով խողովակները կտրեցէ՛ք՝ կը լմննայ, եւ ատրեանակ ունեցողներն ալ թող առնեն՝ աղմուկ հանելու համար»⁽¹¹⁸⁾: Եւ երեւակայութեանը մէջ այնչափ առաջ գնաց, որ բացազանչեց. «Երանի՛ թէ ձեզմէ երկու հոգի վիրաւորուէր կամ չորս հոգի սպաննուէր»․ խնդիրը կարգադրուած է, եւ խօսքը ուղղելով ինծի՛ [Հարցուց.] «Զե՞ս ուզեր կեանքդ ազգիդ համար զոհել»: . . . Ռշտունին վերջին անգամ դարձեալ հարցուց. «Ի՞նչ է վերջին որոշումդ»: Ոտքի կենալով յայտարարեցի. «Զինեալ կամ անպէ՛ն՝ երկուքէն ունէ մէկին համար խոստումս կը յարգեմ, ապա թէ ոչ՝ կ'իսամիջոցով մէկ քայլ [իսկ] չեմ առներ. . .»⁽¹¹⁹⁾:

Այսօր յականէ անուանէ յայտնի են գաղտնի այս հանդիպումին մասնակիցները, սակայն մի՛շտ ալ անյայտ կը մնայ ինքնութիւնը Սահակեանի յիշած «երկու անծանօթներ»ուն, որոնք, այդպէս ալ, չեն խօսիր, կը մնան լուռ եւ ունկնդիրի ու դիտողի դերին մէջ, եւ առ այդ ալ՝ կասկածելի: Այսօր, դէպքերէն հարիւրամեակ մը ետք, չա՛տ է դիւրին ենթադրութիւն ու վերագրում կատարել անոնց ինքնութեան մասին⁽¹²⁰⁾, սակայն պարկեշտութիւնը կը պահանջէ որ չկատարուին չհիմնաւորուող եզրակացութիւններ: Այսուհանդերձ՝ Սահակեանը միա՛կն է, որ կը յիշէ ներկայութիւնն անոնց, եւ, հետաքրքրակա՛ն, ինքզինք երբեք անյարմար ու անհանգիստ չի զգար անոնց լռելեայն ներկայութեան առջեւ:

Առաջին այս հանդիպումէն ետք՝ ցոյցի կազմակերպիչներուն յաջորդ հանդիպումը տեղի ունեցաւ 25 Սեպտեմբերին: «Ի՛նչ վերջ նոյն խուցն ենք եւ նոյն անձերը: Ժողովին տիրական դէմքը դարձեալ Ռշտունին է»՝ կը հաւաստէ Սահակեանը, որ ներկաներուն յայտնեց Ալէաթճան Սրբազանին կարծիքը յետ երկարատեւ խորհրդակցութեան եւ վիճարանութեան: «Կրօնականները իրենց դործին թող նային»՝ եղաւ լակոնական ու հեգնախառն պատասխանը Ռշտունիին: Ահաւաստիկ այն ատենն էր որ Սահակեանը հարց դրաւ թէ իրեն համար տակաւին յստակ չէր թէ Ռշտունին կողմնակից էր ցոյցին զինեալի՞ն թէ անզէնին: «Զինեալի[ն], զինեալի[ն]»՝ որոտաց ձայնը Անտոն Ռշտունիին: Որոշուած էր ամէն ինչ: Հակառակ օսմանեան իշխանութիւններուն եւ Պոլսոյ օտար ղեսպաններուն կատարուած

յայտարարութեան, թէ խաղաղ ցոյց մըն էր ըլլալիքը՝ անիկա պիտի կատարուէր գինեալ, ի՞նչ փոյթ թէ արտաքննապէս այդ մէկն ունենար անգէն ու խաղաղ երեւոյթ:

Այսօր կասկածէ վեր է, որ ժողովականները գիտէին լրջութիւնն ու ծանրութիւնն իրենց առնելիք քայլին: Վստահ ենք, որ գիտէին նաեւ թէ իշխանութիւններն արդէն իսկ կազմ ու պատրաստ կը սպասէին ցուցարարները: Գուցէ այս գիտութիւնն իսկ է պատճառը, որ ժողովականներն ու Հնչակեան Կուսակցութեան Պոլսոյ Վերին ու Գործադիր Մարմինները եւ Հնչակեան ա՛յլ գործիչներ միասնաբար որոշէին ցոյցը յետաձգել ու զայն տեղափոխել Կիրակիէն Երկուշաբթի: Ապա՝ գինեյ կարենալու համար ցուցարարներուն գոնէ Հնչակեան անդամները՝ Շաբաթ օրը, 28 Սեպտեմբերին, ըստ Մարգար Հացագործեանի, գնուեցան 400 ատրճանակներ, եւ՝ «ամէն ինչ կարգին է [ը]»: Յաջորդ օրը, ցոյցին ղեկավարներէն Արշաիր Կամսարականը, Մարգար Հացագործեանը եւ Կարապետ Սահակեանը ունեցան նախապատրաստական հանդիպում մը Անգլիական Ապահովագրական Եունիթն Ընկերութեան Ղալաթիոյ գրասենեակին մէջ: «Ընկերութեան պաշտօնեաները մեզնից ըլլալով», կը գրէ Սահակեան, «կամ աւելի ճիշտ պիտի ըլլայ ենթադրել թէ ապահովագրական ընկերութիւնն ալ իր պետութեան որդեգրած քաղաքականութեան գիտակից ըլլալով՝ թոյլատրած էր սրահը մեզի տրամադրելի ընել»: Հոս էր որ Արշաիր Կամսարականն ըրաւ հակիրճ խօսք մը ու յայտնեց, թէ «վաղը... գործին յաջողութիւնը ձեր համոզումէն եւ ձեր նուիրումէն կախում ունի»: Կամսարականի խօսքէն ետք յոտնկայս տեղի ունեցաւ «նուիրական ուխտը»: Ապա Կամսարականը ներկայացուց Սահակեանը իբրեւ «վաղուայ գործին պարագլուխն ու առաջնորդը», եւ որպէսզի ամէն մարդ կարենար ճանչնալ զայն եւ խիտ շարքերով բոլորուէր անոր շուրջ, յայտարարեց որ անիկա «իր ուսերուն վրայ կարմիր նշան մը պիտի կրէ [ը]», ու եզրակացուց որ առիթ պէտք չէր տալ ոստիկանութեան «թուղթը անոր ձեռքէն խլելու, մինչեւ որ Պապը Ալիէն ներս կարենաք հասցնել»: Ապա, այս բոլորէն ետք, ինչպէս Սահակեան կ'աւարտէ պատումն այս վերջին հանդիպումին՝ «այդտեղ երկու օրինակ ձեռագիր պահանջագիր յանձնուեցաւ այս տողերը գրողին»⁽¹²¹⁾:

Պատրաստ էր ամէն ինչ, ինչպէս որ պատրաստ էին իշխանութիւնները: Ըստ Նիւ Եորք հրատարակուող Հայէ կրկշաբաթաթերթի Պոլսոյ թղթակիցին 2 Հոկտեմբեր 1895-ի թղթակցութեան՝ «Սեպտեմբեր [մեքեր] 28-ին (Շբ.) տեղւոյն հայ երիտասարդութիւնն գրով ծանոյց Բ[արձրագոյն] Դրան, Ոստիկանութեան եւ Արդարութեան Նախարարներուն՝ թէ ցոյց մը պիտի ընէ, նման եւրոպական ցոյցերուն, եւ ազերսագրաւ մի իրենց վիճակի բարւոքում եւ Հայկական Խնդրոյ

լուծումն պիտի հայցէ: Այն գիշերն իսկ աւագանեաց ժողով կը կազմուի, եւ պէտք եղած միջոցներ ձեռք կը առնուին կառավարութեան կողմանէ: Յաջորդ օրն իսկ փոխներու խումբեր եւ Հեծեալ ժամտարմաներ կը հսկէին Գում Գափուի, Կէտիկ Փաշայի, [եւ] Ենի Գափուի հայ թաղերն»⁽¹²²⁾: Իր կարգին՝ Թիֆլիսի Մուրն ամսագրի Պոլսոյ թղթակիցը պիտի գրէր իր 19 Սեպտեմբեր/1 Հոկտեմբեր 1895 թուակիր նամակով, թէ «մօտաւորապէս տասնհինգ օրէ ի վեր հայ հասարակութեան մէջ տարածայնութիւններ կային թէ քանի մը ցոյցեր պիտի ըլլան կառավարութեան դէմ, եւ այդ ցոյցի առիթով, առաջունէ պատրաստութիւններ կը տեսնուէին: Այլ եւ այլ շրջանակներու մէջ թղթեր ցրուեցան, յայտարարող թէ ա՛լ եւս պէտք չէ համբերել եւ եւրոպական քաղաքականութենէն խոշոր-խոշոր ակնկալութիւններ ունենալ՝ թէ, հակառակ ամէն տեղի եւ ամէն տեսակ կոտորածներու, մեր Պատրիարքարանն ու եկեղեցիները բաց են, եւայլն:

«Այս ցոյցը Ս. Խաչի կիրակին կամ Երկուշաբթին ընել որոշուած էր: Պատրիարքը, իմանալով, կը զգուշացնէ մերինները այդպիսի անխոհեմ ցոյցէ մը եւ կը ջանայ ապահովցնել թէ ինք հարկ եղած բոլոր միջոցները [ի] գործ դրած է այսքան երկար ձգուած խնդիրը վերջապէս վերջացնելու համար քանի մը օրուան մէջ:

«Յոյցին համար որոշուած օրը Խաչին Երկուշաբթին եղաւ. 18 Սեպտեմբեր⁽¹²³⁾: Սակայն տարածայնութիւնը բերնէ բերան հասցըած էր մինչեւ կառավարական պաշտօնատուները, ու ամէն կողմ պատրաստութիւն տեսնուած էր այդ տղայական ցոյցին⁽¹²⁴⁾ առաջը անմիջապէս առնելու համար»⁽¹²⁵⁾:

Իրականութեան մէջ՝ կատարելի ցոյցին լուրը հաղորդուեցաւ Պոլսոյ օտար ղեսպանութիւններուն ալ: Այսպէս, նոյն թիւի՝ 28 Սեպտեմբերի գիր մը կը յայտնէր Ֆրանսական ղեսպան Փոլ Քամպոնին, թէ «Պոլսոյ հայերը որոշած ըլլալով խաղաղ ցոյց մը կազմակերպել իրենց ձգտումները յայտնելու համար հայկական նահանգներու մէջ գործադրուելիք բարենորոգումներու մասին, եւ անիկա ունենալով ոչ մէկ յարձակողական նկարագիր՝ ոստիկանութեան եւ զինեալ ուժերուն գայն արգելելու միջամտութիւնը կրնայ ունենալ ցաւալի հետեւանքներ, որոնց համար ի յառաջագունէ կը մերժենք ամէն պատասխանատուութիւն»⁽¹²⁶⁾: Նոյն փաստաթուղթը յանձնուեցաւ նաեւ Պոլսոյ անգլիական ղեսպան Ֆիլիփ Բըրբին⁽¹²⁷⁾ եւ Պոլսոյ արեւմտեան այլ ղեսպանութիւններուն, որոնց հետ Հնչակեան Կուսակցութեան կապն էր Լեւոն Մկրտիչեանը՝ իր լեզուագիտութեան համար⁽¹²⁸⁾:

Նոյն թուակիր եւ «Արտասահմանցի հայերու ստորագրութիւնը» կրող թուղթ մըն ալ առաքուեցաւ ոստիկանութեան եւ արդարա-

դատութեան նախարարութիւններուն, ինչպէս կը հաստատէ թուրք պատմաբան Մեհմէտ Հոճաօղլուն: «Իրենց հայրենիքէն ներս հայերուն կրած վիճակին պատճառով»՝ կ'ըսէր այդ գիրը՝ «որոշուեցաւ զիմել կարգ մը բարձրագոյն իշխանութիւններու: Այս արարքով անոնք կ'ուզեն ներկայացնել իրենց վիճակը: Պաղատութիւնը խանդարելիք ոչ մէկ շարժում պիտի ըլլայ: Եթէ բողոքագիրին արգելք հանդիսանալու համար հրահանգուի զօրքին, ոստիկանութեան եւ ոստիկան-գինուորներուն որ միջամտեն, պատասխանատուութիւնը պատճառ հանդիսացողինն է»⁽¹²⁹⁾:

Իրաւ էր, որ տրուած սա երկու փաստաթուղթերուն մէջ կային երանգային տարբերութիւններ, երկուքն ալ, սակայն, կը շեշտէին խաղաղ բնոյթը ցոյցին, երբ, միւս կողմէ, բարձրադասակ կը յայտարարէին անոր սքօղուն՝ այլ զինեալ նկարագիրը: Գուցէ այս մէկին վրան յենելով էր, որ յետագային, 10 Հոկտեմբեր 1895 թուակիր իր տեղեկագիրով՝ պիտի խեղաթիւրուած պատկեր մը ներկայացնէր ոստիկանութեան նախարար Հիւսէին Նազըմ Փաշան, եւ հաղորդէր թէ ճախագէտ Հնչակեան Կուսակցութեան ղեկավարներէն՝ Յակոբէն իմացած էինք, որ [մէկ կողմէն] քանի մը հազար զինեալ հայեր յարձակում պիտի գործէին Բարձրագոյն Դուռին վրայ, [իսկ] միւս կողմէն ալ՝ յարձակելով մահմետական թաղերուն վրայ՝ պիտի սպաննէին իրենց հանդիպած մահմետականները: Այս ձեւով նոր եւ արիւնալի անկարգութիւն մը պիտի ստեղծուէր Պոլսոյ մէջ»⁽¹³⁰⁾:

Հետաքրքրական է, սակայն, ստորագրութեան խնդիրը այս փաստաթուղթերուն: Չկայ որեւէ տուեալ, որ յայտնէ թէ ցոյցին կազմակերպիչները դրսեցիներ էին եւ օտարներ: Կ'անգիտանանք պատկանելիութիւնը աշխատանքային հանդիպումի մը ներկայ եղած երկու անհատներուն, որոնց յիշատակումը կայ Սահակեանին մօտ: Հնչակեան Կուսակցութեան պաշտօնական պատմագրութիւնը եւ Հնչակն ինք կ'ընդունին թէ իրենք՝ հնչակեաններն էին կազմակերպիչները ցոյցին: Հնչակեան յուշագրողներ կը հաստատեն նոյնը: Այսուհանդերձ՝ փաստաթուղթերը կը կրեն ա՛յլ ստորագրութիւն եւ անոնց կը պակսի որեւէ կնիք: Խնդիրը կը լուծուի լո՛կ Արփիարեանին կողմէ, որ որպէս Հնչակեան Կուսակցութեան Պոլսոյ Վերին Մարմնի ղեկավար՝ կը հաւատար թէ հնչակեան ղեկավարութիւնը մի՛շտ ալ շարժած էր կուսակցականօրէն եւ՝ մի՛շտ ալ սխալած: «Մենք արգէն այս ճշմարտութիւնը բարձրած էինք Պիլի-Պուլերու»⁽¹³¹⁾ հրատարակութենէն առաջ՝ կը գրէ անիկա Հնչակեան Կեղրոնին ներկայացուելիք ընդարձակ տեղեկագիրի մը մէջ, ուստի «Պոլսոյ ցոյցին չուղեցինք կուսակցական երեւոյթ տալ, հապա փափաքեցանք զայն ներկայացնել իբր ժողովրդային ընդհանուր շարժում մը: Ո՛չ Սեպ-

տեմբեր 18-ի յայտարարութեան տակը մեր կնիքը դրուեցաւ, ոչ ալ դեսպանատուններուն զրկուած գրերուն տակը: [Լոնտոնի] Կեզրոնը սակայն մեզի համամիտ չգտնուեցաւ, տարբեր ուղղութեան հետեւեցաւ, եւ մեզի ալ յանդիմանութիւն զրկեց, թէ ինչո՞ւ ուզած ենք զուտ ազգային երեւոյթ ընծայել այդ ցոյցին եւ ոչ թէ կուսակցական»⁽¹³²⁾:

Ոստիկանութեան նախարարը, որ կը պնդէ ցոյցին Հնչակեան Կուսակցութեան կողմէ կազմակերպուած ըլլալուն վրայ՝ կը խեղաթիւրէ ամէն ինչ եւ անոր կու տայ զինեալ նկարագիր: Այժմ ձեռքի տակ գտնուող դիւանական ո՛չ մէկ թուղթ կու տայ բովանդակութիւնը թուրք նախարարին սա քանի մը տողերուն: Ընդհակառակը՝ անոնց բոլորն ալ կը պնդեն երթին խաղաղ բնոյթին վրայ: Պոլսոյ ամբերիկեան դեսպան Թերէլն իր 3 Հոկտեմբեր 1895 թուակիր եւ թիւ 635 հեռագիրով կը հաղորդէ, թէ «քանի մը օր առաջ անանուն»⁽¹³³⁾ նամակ մըն էր զրկուեր Մեծ Վեզիրին՝ հաղորդելու համար անոր որ Երկուշաբթի օրը, 30 Սեպտեմբերին, մեծ թիւով հայեր պիտի քալէին դէպի Բարձրագոյն Դուռ դարմանի մը ի խնդիր՝ եթէ, չհանդիպէին որեւէ ընդդիմութեան: Կ'իմանամ թէ Դուռը տեղեակ պահեց Պատրիարքը դէպքի մասին եւ թէ կ'ակնկալուէր որ անիկա արգիլէր հայերուն խմբաւորումը Դուռին առջեւ, եւ թէ ձախողելու պարագային՝ ի՛նք պատասխանատու պիտի բռնուէր հետեւանքներուն համար»⁽¹³⁴⁾:

Իրա՛ւ էր Թերէլը: Դէպի Բարձրագոյն Դուռ երթը հաղորդուեցաւ իշխանութիւններուն: Կատարուած յայտարարութիւններուն թրքերէն օրինակներէն զրկուեցան նաեւ Վոսփորի ընդհանուր զատախազ Լեպիպ էֆենտիին եւ եղեռնադատ ատեանի նախագահ Էտիպ էֆենտիին: Այդ վերջինը կարգաց զայն «իր ընկերներուն, որոնք իսկոյն կը գունատին, եւ անկէց վերջը [զայն] կը տանի [ու] կը յանձնէ դատական նախարարին եւ ան ալ կը զրկէ ոստիկանութեան նախարարին: Նոյն իրիկունը ոստիկանութեան տնօրէն Հիւսնին՝ նազըմին կողմէ Իզմիրլեանին կու գայ խնդրել [ու] որ յեղափոխականներու պետերը հրաւիրէ եւ խնդրէ որ ցոյցը չընեն: Իզմիրլեան կը պատասխանէ .

«— Ես ո՛չ յեղափոխականներու մեծը կը ճանչնամ եւ ոչ [ալ՝] փոքրը. ինչ որ կըցայ ըսել յուսահատ ժողովուրդին՝ ըսած եմ. այլեւս ուրիշ բան չեմ կրնար ըսել»⁽¹³⁵⁾:

Սակայն դէպքերուն ժամանակակից մը, եւ գուցէ ականատես մը նաեւ, քչիկ մը տարբեր ձեւով կը ներկայացնէ այս բոլորը: Ըստ անոր՝ կառավարութիւնը «արդարութեան նախարարին միջոցաւ Շարաֆ Երեկոյ մի թուղթ յղած է Պատրիարքարան, թէ «հինգ տարի առաջ Գում-Գափուի եկեղեցւոյն մէջ տեղի ունեցած ցոյցին նման ցոյց

մը տեղի պիտի ունենայ եղեր վաղն, հաճեցէք առաջքն առնել, զի հարկ չմնար այլեւս ցոյցերու, [որովհետեւ] ձեր խնդիրն կարգադրուելու վրայ է»⁽¹³⁶⁾։

Փաստերը ցոյց կու տան, սակայն, որ ցոյցը չմերժուեցաւ առաջին իսկ վայրկեանէն։ Ընդհակառակը, ինչպէս կը հաստատէ Պոլսոյ Ամերիկեան Ռապըթ Գոլէճի նախագահ Ճորճ Ուաշպըրը, Հայերը «արտօնութիւն խնդրեցին [ցոյցի համար] եւ ստացան զայն, սակայն վերջին վայրկեանին յետս կոչուեցաւ անիկա, երբ զինուորներ զրկուեցան արգելելու համար անոր»⁽¹³⁷⁾ ներկայացումը»⁽¹³⁸⁾։ Իսկ այդ մէկն եղաւ հիմնական սխալներէն մէկը թրքական իշխանութիւններուն։ Արդարեւ՝ Ծրետերիք Տէյվիս կրին կը յայտարարէ, թէ Հայերը «ձածուկ չպահեցին այս մէկը՝ յայտարարելով որ պատշաճ ձեւով մը պարզօրէն աղերսագիր մը պիտի ներկայացնէին Մեծ Վեզիրին, եւ լուր զրկեցին իրենց մտադրութեան մասին։ Թուրքիոյ մէջ հասարակ բաներ են այսպիսի միջոցառումներ՝ ուշադրութիւն հրաւիրելու համար առկայ տառապանքներու վրայ։ Սակայն որպէս գործելակերպ՝ իշխանութիւնները որդեգրեցին սխալ ուղի մը, [եւ] փոխանակ ձգելու որ ժողովուրդը ներկայանար Դուռ եւ ներկայացնէր իր աղերսագիրը, ինչպէս որ կը պահանջէր սովորութիւնը, [եւ] այսպիսով խաղաղօրէն շրջանցէին գործը, ոստիկանութեան հրահանգեցին ճամբան խափանել։ Այս մէկն առաջնորդեց խռովութեան մը»⁽¹³⁹⁾։

Նոյն կարծիքէն է Պերլինի Ծոսիշէ Յայթունկ օրաթերթն ալ, որ 1895 Հոկտեմբերի իր խմբագրականով կը գրէր, թէ «Հայերու յիշատակագիրը չի չափազանցեր այն պահանջները, որոնք առաջ դրուած են մեծ պետութեանց կողմէ։ Եթէ Մեծ Եպարքոսը ընդունէր յիշատակագիրը՝ տխուր զէպքերը տեղի չէին ունենար, որովհետեւ Հայերուն մտքէն չէր անցներ ցոյց կազմակերպել Պոլսոյ մէջ...։ Բ[արձրագոյն] Դրան կողմէ բարենորոգումներու ձգձգուիլը բնական կերպով առաջացուց զժգոհութիւն Հայերու մէջ եւ մշտնջենական ձերբակալութիւնները Փոքր Ասիոյ մէջ, նորանոր գազանութիւնները Քեմախի եւ Երզնկայի մէջ աւելի հրահրեցին այդ զժգոհութիւնը։ Այդպիսի պայմաններու մէջ յիշատակագիրի մը ներկայացումը չափաւոր եւ խելացի գործ էր։ Ոստիկանութեան ու գորքի միջամտութիւնը առիթ եղաւ արիւնահեղութեան»⁽¹⁴⁰⁾։

Գերման այլ թերթ մը, սակայն, կազեթթէն, չկարողացաւ ըլլալ այսքան քաջ, եւ ինչպիսի ծուղակը Պերլինի թրքական ղեսպանատունին՝ հրատարակեց անկէ ստացուած գիր մը, որով կը դատապարտէր Պատրիարքը, որովհետեւ անիկա «թիկունք կը կանգնէր Հայոց մօտ յեղափոխական շարժումի մը»⁽¹⁴¹⁾։

Ի՛նչ որ ալ եղած ըլլային իրականութիւնները եւ ինչպէս որ ալ ներկայացուէին անոնք՝ երբ Հիւսէին Նազըմ փաշան շկարողացաւ տեսակցիլ Իզմիրլեան Պատրիարքին հետ, որ անկողին էր մտեր յուզումէն անհանգստացած, ջղազրգուած՝ իր մաղձը թափեց իրեն խօսակից ատենապետներուն վրան Ազգային Քաղաքական եւ Կրօնական ժողովներուն եւ խիստ հրահանգով մը ազդարարեց անոնց, թէ «Համախմբումը արգիլուած է [Օսմանեան] Կայսրութեան մէջ: Անմիջապէս ցրուեցէք: Եթէ չցրուէք՝ զո՛ւք էք պատասխանատուն: Օրինականօրէն կ'ենթարկուիք ծանր պատիժի: Իրաւունք ունեցող եւ չունեցող, շիտակ կամ սխալ, ամէն մարդու գանգատին առջեւ բաց է դուռը կառավարութեան: Սակայն այս մէկը պէտք է կատարել օրէնքի սահմանին մէջ: Օրէնքի սահմանէն ներս գանգատ բառնալու համար պէտք է որ Պատրիարք էֆենտին հիմա՛ իսկ Բարձրագոյն Դուռ ներկայանայ երկու հոգիի հետ, մէկը՝ Կրօնական ժողովէն եւ միւսը՝ Քաղաքականէն»⁽¹⁴²⁾:

Սակայն բաւարար չնկատելով սա ազդարարութիւնը՝ ներքին գործերու նախարար Րիֆաթն ալ, իր կարգին, նոյն բովանդակութեամբ հրահանգ մը հասցուց Պատրիարքարան: 30 Սեպտեմբեր թրւակիր այդ հրահանգը ուղղուած էր Պատրիարք Սրբազանին եւ հայ ժողովուրդին, ու բառացի կերպով կ'ըսէր թէ «կը հրահանգեմ հիմա՛ իսկ ցրուել ձեր համախմբումը: Ի՛նչ որ է ձեր յայտարարութիւնը՝ Կրօնական եւ Քաղաքական ժողովներէն մէկական հոգի առնելով՝ Պատրիարք էֆենտին կու գայ Բարձրագոյն Դուռ եւ կը ներկայացնէ զայն: Կրկի՛ն կը հրահանգեմ ցրուումը համախմբումին:

«Մեծարգոյ վարչապետ Սայիտ փաշայի եւ արդարադատութեան ու կրօնական մեծայարգ փաշաներու ներկայութեան առնուած որոշումին յենելով է որ կը կատարեմ այս յայտարարութիւնը»⁽¹⁴³⁾:

Հարցը հոս շուարտեցաւ սակայն, որովհետեւ նո՛յն օրն իսկ, 30 Սեպտեմբերին, Պոլսահայութեան եւ Պատրիարքարանին վրան ճնշումն ընելու համար աւելի զօրաւոր՝ Պատրիարքարան յղուեցաւ այլ գիր մը, որ այս անգամ կը կրէր ստորագրութիւնները Կայսրութեան վարչապետ Սայիտ, արդարադատութեան եւ կրօնական նախարար Րըզա, ներքին գործերու նախարար Րիֆաթ եւ արտաքին գործերու նախարար Թուրխան փաշաներուն: Ուղղելով իր խօսքը Պատրիարքին, եւ Կրօնական ու Քաղաքական ժողովներու անդամներուն՝ անոնք կ'ըսէին թէ «Նորին Վեմութեան ռատիկանութեան նախարարը Պատրիարքարան էր զրկուեր՝ կառավարութեան անունով յայտարարելու համար ցրուումը համախմբումին:

«Պատրիարք էֆենտին մերժեց տեսնել Նորին նախարարը: Ապա այս առաքելութեամբ զրկուեցաւ վարչապետութեան խորհրդա-

կան հազարապետ խալիլ պէյը: Կրկին չցրուեցաւ համախմբումը: Ներկայացուցիչը մեկնեցաւ Պատրիարքարանի անդամներէն մէկուն տուած պատասխանով միայն, թէ պիտի աշխատէին ցրուել համախմբումը՝ պայմանով որ ոստիկանութեան նախարարութեան կողմէ երաշխաւորուէր Բարձրագոյն Դուռ յանձնումը աղերսագիրին: Նախարարութեան ներկայացուցիչին համաձայն՝ իրեն ըսուած է թէ ժողովուրդը զինեալ չէ: Նորին կառավարութիւնը նախընտրելով օրինականօրէն արգիլեալ համախմբումին մասնակցող անհատները ցրուել Պատրիարքարանի աշխատանքին մեղմ ձեւովը՝ համամիտ չէ այլ ձեւով ցրուելու գայն: Այս համախմբումին մէջ զեր չունին անհատները: Յայտնի է, որ համախմբումին նպատակները նպաստաւոր են ո՛չ պետութեան եւ ոչ ալ ժողովուրդին: Անոնք արգիւնքն են օրինազանց եւ անկարգ անհատներու գրգռութեան: Առ այդ՝ օրէնքով որոշուած է, որ [այս] յայտարարութեան [Պատրիարքարան] յանձնումէն սկսեալ մէկ ժամուան ընթացքին ցրուի համախմբումը»⁽¹⁴⁴⁾:

Յստակ էր, որ սպառնալիք էին կատարուած բոլոր յայտարարութիւններն ու հրահանգները եւ՝ նենգափոխումն իսկ ճշմարտութեան: Այժմ հատորներ կը կազմեն Իզմիրիեան Պատրիարքին «օրինական կերպով» եւ «օրէնքի սահմանին մէջ» Բարձրագոյն Դուռ ներկայացուցած աղերսագիրերը, խնդրագիրերը, յուշագիրերը, բողոքագիրերը, պահանջագիրերը, գանգատագիրերը, եւ տակաւին բազմաթիւ նոյնանման այլ գիրեր՝ որոնք պաշտօնականօրէն կ'իյնան օսմաներէն քաղրիք վերագիրին ներքեւ, եւ որոնցմէ ո՛չ մէկն ունեցաւ դրական ու գոհացուցիչ պատասխան: Նազըմն ու մնացեալները մի՛շտ ալ փորձեցին յայտնի ու անյայտ միջոցներով շեղել ընթացքը օրէնքին եւ օրինականութեան եւ ստացուած քաղրիքով թուղթ մը եւս աւելցուցին վրան օսմանեան դիւանական թուղթերու դէգերուն, եւ ո՛չ մէկ ատեն պատասխանատուութեան կանչեցին թուրք իշխանաւորները հետու կամ մօտ հայկական գաւառներուն: Միացեալ Նահանգներու Պոլսոյ դեսպան Թերէլի իսկ վկայութեամբ՝ «Պատրիարքը պատասխանած է [Նազըմին], թէ պիտի փորձէ արգիլել համախմբումը, սակայն ինք որ ի զուր էր փորձեր [Դուռ] ներկայացնել ցաւերն իր ժողովուրդին՝ չէր կրնար պատասխանատու նկատուիլ, այլ [պատասխանատու էին] թուրք ա՛յն պաշտօնատարները՝ որոնք անոնց»⁽¹⁴⁵⁾ մերժեցին արգարութիւն ընել»⁽¹⁴⁶⁾:

Յետագային՝ Հիւսէին Նազըմ փաշան իր տեղեկագիրով պիտի խօսէր այս բոլորին մասին, սակայն ի յառաջագունէ որոշած ըլլալով մրտսել հանդիպակաց կողմը եւ անպատասխանատու ընծայել իշխանութիւնները պատահածներուն եւ պատահողներուն համար: «Ոստիկանութիւնը որ իմացեր էր ցոյցին մասին»՝ կը գրէր փաշան՝ «դէպ-

քէն երեք օր առաջ Հայոց Պատրիարքարանը զրկեց Պոլսոյ ոստիկանութեան տնօրէն Հիւսնի պէյը, որ երբ յայտներ էր Պատրիարքին որ օգտագործէր [պատրիարքական] իր իշխանութիւնը այսպիսի արիւնալի դէպքի մը առաջին առնելու համար եւ հայ ժողովուրդին տարանհրաժեշտ յորդորը, [եւ] երբ անիկա յայտարարեւ էր որ Պատրիարքը կարող էր արգելք հանդիսանալ այսպիսի վնասակար դէպքի մը [եւ] առաջին առնել [անոր]՝ Պատրիարքն ըսեւ էր. «Այո՛, ե՛ս ալ իմացայ այսպիսի խօսք մը»⁽¹⁴⁷⁾: Ի՞նչ ընեմ, իմ խօսքիս չեն անսար: Ժամանակն ալ նեղ է: Ի՞նչ որ ալ ընեն՝ ես պատասխանատու չեմ»: Այսպիսով Պատրիարքը կը խոստովանէր որ ինքը տեղեակ է դէպքէն եւ անոր ըլլալիքէն: Թող մէկ կողմ մնայ յեղափոխականներուն ստեղծելու ռազմ դէպքին արգիլումը Պատրիարքին կողմէ, անոր խօսքերէն իսկ կը հասկցուէր որ զայն դրդողն ալ ի՛նքն էր: Ոստիկանութեան տնօրէն Հիւսնի պէյ արտայայտուեւ էր Պատրիարքին այդ ըլլալի՛ք կեցուածքին դէմ, թէ հակառակ որ անիկա կարող էր արգելք հանդիսանալ դէպքին՝ փախուստ կու տար անկէ, թէ նոյնիսկ ի՛նքն էր դեկավարն անոր, եւ յետագային պատասխանատու պիտի բռնուէր, ու մասնաւոր կերպով շեշտեւ էր թէ ձեռք առնուած էր ամէն ձեւի ոստիկանական կարգադրութիւն»⁽¹⁴⁸⁾:

Սա տեղեկագիրէն քիչ մը առաջ, եւ Պոլսոյ ցոյցէն միայն երեք օր ետք, Հոկտեմբեր 3-ին, ոստիկանութեան նախարարն արդէն իսկ տուեւ էր իր առաջին տեղեկագիրը, ուր ի միջի այլոց կը գրէր անիկա, թէ «հայ կազմակերպութիւնները... համախմբուեցան Պատրիարքարանի եկեղեցիին մէջ՝ Երկուշաբթի, 30 Սեպտեմբերին...: Հարցաքննութիւնները հաստատած ըլլալով որ անոնք որոշած էին... զինեալ յարձակում մը կազմակերպել Բարձրագոյն Դուռին վրայ եւ ըմբոստութիւն մը յառաջացնել Եւրոպայի նեցուկն ապահովելու համար՝ ոստիկանութեան տնօրէն Հիւսնի պէյը զրկուեցաւ Պատրիարքարան եւ Պատրիարքը տեղեակ պահուեցաւ կացութենէն:

«Կարող ըլլալով ըմբոստացումի այսպիսի փորձ մը կեցնելու՝ Պատրիարքը... ապաւինեցաւ կեղծ պատճառարանութիւններու՝ ըսելով թէ չէր կրնար մեծ բան մը ընել, թէ ժողովուրդը հասեր էր ծայրն [իր համբերութեան], թէ շատ ուշ էր միջամտելու համար, այսպիսով ցոյց տալով թէ չէր ուզեր արգիլել խառնակութիւնը:

«Այս կացութեան մէջ... ձեռք առնուեցան կարգ մը կանխազուշութիւններ...: Ոստիկանութեան եւ ոստիկան-զինուորներուն հրահանգուեցաւ չօգտագործել իրենց զէնքերը, խուսափիլ բըրտութեան դիմելէ... եւ ցուցարարները ցրուել առանց արիւնահեղութեան:

«... Եկեղեցիին մէջ կար հազարէ աւելի մարդ: Ուրեմն խումբ մը մեկնեցաւ Պատրիարքարան, ուր տեղի ունեցաւ վիճարանութիւն մը: Ատրճանակով եւ դաշոյնով զինուած այս ցուցարարներն սկսան քալել...: Անոնց զանազան թաղերէ եկող ընկերները եկան ու՛ճացնելու թիւն անոնց՝ Տիփան պողոտային վրայ...: Մինչեւ վերջն ալ անոնք մերժեցին անսալ այն յորդորներուն, որոնք ուղղուեցան անոնց եւ որոնց՝ առանց տատամսելու պատասխանեցին հրացանաձգութեամբ... Բազմութեան նայուածքին առջեւ եւ վայրագօրէն սպաննեցին Պոլսոյ ոստիկան-զինուորներու խորհուրդի անդամ Սերվէթ⁽¹⁴⁹⁾ պէյը: Ապա կրակեցին պատահականօրէն՝ ինչպէս մահմետական եւ բրիտանացի խառն ժողովուրդին՝ նոյնպէս ալ կարգապահական ուժերուն վրայ՝ այսպիսով վիրաւորելով մեծ թիւ մը մարդերու»⁽¹⁵⁰⁾:

Ոստիկանութեան նախարար Հիւսէին Նազըմ փաշան ազա՛տ էր Օսմանի Աշխարհէն ներս մտածելու իր ուզածին պէս եւ թափ տալու իր երեւակայութեան: Ի՛րն էր իրաւունքը դատելու եւ վճռելու եւ ըլլալիքին համար պատասխանատու բռնելու ուրիշները միայն: Իզմիրլեանն այդ ուրիշներէն էր, ի՞նչ փոյթ որ անիկա ըլլար գլուխն իր հօտին եւ կապն անոր եւ Օսմանեան իշխանութիւններուն միջեւ, սակայն թուրք նախարարը երբեք չէր կրնար ընդունիլ որ Իզմիրլեանն իր պաշտօնը չօգտագործէր պաշտպանելու համար իշխանութիւններուն անկարելի ընթացքը ի վնաս իր հօտին: Նազըմ փաշան կ'անգիտանա՞ր թէ ուրիշ էր մետաղը Իզմիրլեանին, եւ գուցէ ա՛յս իսկ էր պատճառը, որ իր անունին կպած մնար «Երկաթեայ Պատրիարք» յորջորջումն ալ⁽¹⁵¹⁾: Այսուհանդերձ՝ թուրքն իր աշխարհավարութեան հետամուտ՝ հազի՛ւ թէ կարողացաւ հանդուրժել եղածին: Ճիշտ էր՝ ըստ պառնայ անիկա Պատրիարքին եւ հայութեան, եւ այդ մէկը՝ լրջօրէն, որովհետեւ նո՛յն գիշերն իսկ սուլթանական արքունիքէն ներս կայացաւ ժողով մը, որուն ներկայ գտնուեցաւ օսմանեան աւագանիին հետ Նազըմն ի՛նք նաեւ: Ինչ որ տեղի ունեցաւ հօն՝ արձանագրուած է ո՛չ մէկ տեղ: Սուլթանն որ իր Յուշատետրին⁽¹⁵²⁾ մէջ առիթ չի փախցնէր մաղձ թափելու հայերու վրայ՝ ունի ո՛չ մէկ խօսք այս ուղղութեամբ, ինչպէս որ չունի անոր յաջորդող Հայաստանի ջարդերուն մասին: Ը՛նդհակառակը, զազանացած՝ ինչպէս կը գրէ Վարդեանը, եւ «իր անձի պաշտպանութեան մտահոգութենէն տարուած, կը հրամայէ իր պալատի հսկողութիւնը կրկնապատկել եւ Բարձրագոյն Գրան փողոցները զինուորներով շրջապատել [ու] կազմ ու պատրաստ ըլլալ՝ ցուցարարներու յառաջխաղացքը ամէն գնով կասեցնելու»⁽¹⁵³⁾: Տեղեակ այս բոլորին, իսկ այս մէկն առեղծուած կը մնայ միայն, Պոլսոյ Հնչակեան Վերին Մարմինն ու Գործադիր Մարմինը «գիտէին թէ

այդպէս պիտի ըլլար», ուստի որոշեցին ցոյցը յետաձգել յաջորդ օրուան՝ Պաշտօնացի Երկուշաբթիին, «եւ քանի որ ցոյցի կ'սպասուէր, հայերուն յուսահատութիւն կը պատճառէ ցոյցին չըլլալը, իսկ թուրքերուն՝ ուրախութիւն»:

«Այդ օր, [29 Սեպտեմբերին], Ալէաթճեան Գրիգորիս արքեպիսկոպոս⁽¹⁵⁵⁾ (Կիլիկիոյ Կաթողիկոս) Սկիւտարի Ս. Պաշ Եկեղեցիին մէջ կը պատարագէ եւ քարոզ կը խօսի «Պաշը պիտի յաղթէ աշխարհի» բնաբանով. ներկայ գտնուող ժողովուրդը «կեցցէ՛ յեզափութութիւն[ը], կեցցէ՛ Հայաստան[ը]» կը պոռայ»⁽¹⁵⁶⁾: Ապա ո՛չ միայն Գուժ Գափուրի Մայր Ծաճարին մէջ՝ այլ «չատ [մը] եկեղեցիներու մէջ հայաստանցիները կը հաղորդուին վաղուան ճակատամարտին իբր պատրաստութիւն, ու բոլորն ալ կը յիշեն այն օրը երբ հայ ժողովուրդը կը հաղորդուէր Աւարայրի ճակատամարտին պատրաստուելու համար: [Իսկ] զանազան թաղերու հայերը, վախկոտները, լսելով որ վաղը տեղի պիտի ունենայ ցոյցը՝ կը շուեն կղզիները...»⁽¹⁵⁷⁾:

Արքայի բանտի իր խցիկէն ներս նստած՝ Ճանկիւլեան տեղեակէր ամէն բանէ՝ ցոյցին կազմակերպումէն մինչեւ ինքնութիւնն անոր ետին կեցողներուն եւ Իզմիրլեան Պատրիարքին ներկայանալիք պաշտօնական անհատներու քանակէն մինչեւ անոնց ի գործ զննելիք սպանալիքը: Սակայն ոչինչ ունի ըսելիք Հնչակեան Վերին Մարմինին ու Գործադիր Մարմինին փոխարարութեան մասին: Ունի նաեւ ո՛չ մէկ խօսք թէ սա զոյգ մարմիններն ի՞նչպէս գիտէին թէ օսմանեան իշխանութիւններն արդիւիւիչ ետք հայոց երթը դէպի Բարձրագոյն Դուռ՝ պիտի իջեցնէին ոստիկանական եւ զինուորական ուժ ու չըջպատէին զայն եւ փակէին բոլոր անցքերը հոն առաջնորդող, եւ առ այդ՝ կազմակերպիչները յետաձգէին ցոյցը Կիրակիէն Երկուշաբթի: Այժմ ի՞նչ որ ալ ըլլան պատասխաններն այս բոլոր հարցերուն՝ որոշուած թուականէն օր մը ետք, 30 Սեպտեմբեր 1895-ի Պաշտօնացի առաւօտեան, ինչպէս 3 Հոկտեմբերին պիտի տեղեկագրէր Պոլսոյ ամերիկեան զեսպան Թերէլն իր կառավարութեան պետական քարտուղար Ռիչըրտ Յունին՝ «Պատրիարքարանին մէջ սրբազան պատարագի միջոցին Պատրիարքը խորհուրդ տուաւ ժողովուրդին որ ըլլար համբերատար եւ զգոյշ: Ներկայ երիտասարդ մը կանգնեցաւ ոտքի եւ կշտամբեց Սրբազանը, որ մեծապէս յուզուած՝ մտաւ իր բնակարանը եւ ինքզինք փակեց ներխուժումին դէմ բազմութեան»⁽¹⁵⁸⁾:

Նիւ Եորքի Հայկ երկչարաթաթերթին պոլսարնակ եւ դէպքերուն ականատես թղթակիցը, սակայն, այսքան խիտ չի ներկայացներ դէպքերը: Ըստ անոր՝ «Սեպտ[եմբեր] 30-ին (Բշ.) հայկական տարագներով գաւառացի աղջիկներ կը ներկայանան առաւօտեան Պատ-

րիարք Հօր Ի Պատրիարքարան: Սոցա մին ուղերձ մի կը կարդայ, կը նկարագրէ Հայուն անտանելի վիճակն, եւ կրած հալածանքներն ու բռնարարումները, եւ կը հարցնէ թէ ի՞նչ պիտի լինի վերջապէս Հայուն վիճակն, թէ ինչո՞ւ թուրքն չ'ընդունիր քրիստոնեայ կառավարութեանց կողմանէ առաջարկեալ ծրագիրն⁽¹⁵⁹⁾, եւն. : Եւ մինչդեռ Պատրիարք Հայրն կը ծանուցանէր թէ ինք կ'աշխատի աջակցութեամբ Անգլիոյ, Գաղիոյ եւ Ռուսիոյ դեսպանաց [Հայկական] Պնդրոյն ելք մը տալ՝ ազլիուներ կը պատասխանեն թէ բաւ է այսչափ ամիսներու սպասում, թէ Պատրիարք Հայրն իրենց առջեւ իյնալու [է] որպէսզի դիմեն իրենց բիւրաւոր եղբարց հետ ի Բ[արձրագոյն] Դուռն եւ անդ հայցեն իրաց վիճակի անմիջական դարման: Մինչդեռ Պատրիարք Հայրն զանոնք հանդարտեցնել կը փորձէր, ի Պատրիարքարան եւ ի Մայր Եկեղեցին խոնկալ հասարակութիւնն «կեցցե՛ն Հայ ազլիուներ, կեցցէ՛ աղատութիւն, կեցցէ՛ Սրբազան Պատրիարք Հայրն» աղաղակելով օդն կը թնդացնեն: Պատրիարք Հայրն իւր տկարութիւնն առարկելով՝ կը զրժէ իրեն եղած առաջարկն⁽¹⁶⁰⁾:

Պատահական չէր ներկայութիւնը Հայուհիներուն, եւ «նախապէս տեսնուած պատրաստութեանց համաձայն խումբ մը տիկիներն եւ օրիորդներ»⁽¹⁶¹⁾ էին որ ներկայացան Պատրիարքին՝ Գում Գափուի Մայր Տաճարի գաւիթին մէջ: Իրականութեան մէջ «ամիսներ տեւող գաղտնի պատրաստութիւնները կը լրանան Սեպտեմբեր 16-ին⁽¹⁶²⁾, եւ քանի մը օր ետք «Երկուշաբթի 3-4000-ի չափ Հայեր կը խոնուին Գում Գափու. այդ բազմութեան մէջ ահագին թիւով վանեցի, մշեցի, բաղիշեցի եւ պոլսեցի կիներ ու ազլիկներ ալ կը զբտնուին: Իզմիրլեան այդ արտակարգ բազմութիւնը տեսնելով կ'զգայ թէ բան մը կը գառնայ: Ժամասացութիւնը հանդարտ կերպով կը շարունակուի մինչեւ Լցաբ ի բարութեանց Բոց, Տէր, եւ Իզմիրլեան ըստ սովորութեան եկեղեցիէն ետք դուրս կ'ելլէ՝ չորս օրիորդներ իրեն կը ներկայանան եւ կը խնդրեն որ իրենք ըսելիքներ ունին եւ բարեհաճի լսել:

«Օր. Մարի Պէյլերեան⁽¹⁶³⁾ (Տիկին Աւետիս Նազգաշեան) իսկոյն կ'սկսի երկար, յուզիչ եւ սրտառուչ ճառ մը կարդալ նկարագրելով Հայաստանի վիճակը եւ Հայոց անտանելի դրութիւնը, որուն եզրակացութիւնը կ'ըլլայ խնդրել Իզմիրլեանէն որ զիմէ եւրոպական վեց պետութեանց, որպէսզի Հայ ժողովուրդը չթողուն բնաջինջ ըլլալ բռնապետութեան ձեռքը: Եթէ այդ տէրութիւնները նորէն պիտի լսեն՝ հայերը գիտեն թէ ինչպէ՞ս պիտի մեռնին: Իզմիրլեան շատ կը յուզուի եւ կը պատասխանէ թէ ինքը բնաւ անտարբեր գտնուած չէ եւ ոչ ալ իր պաշտօնին մէջ անփոյթ. կը խոստանայ երթալ կառավարութեան դուռը կրկին զարնելու եւ խնդիրը դեսպաններուն տեղեկացնելու:

կը յորդորէ որ ցրուին եւ ինք պէտք եղածը պիտի ընէ: Իզմիրլեան երբ կը պատրաստուի Պատրիարքարան երթալ՝ ուրիշ օրիորդ մը կ'ըսէ.

«— Սրբազան, ժողովուրդը մահ կամ ազատութիւն կ'ուզէ⁽¹⁶⁴⁾»:

«Իզմիրլեան [ի] մեկնելէ [ն] վերջ՝ ժողովուրդը թափօր կը կազմէ եւ Ձայնն հնչեց էրզրումի հայոց լեռներէն երգն երգելով ճամբայ կ'ելլէ դէպի Բարձրագոյն Դուռ, նոյնպէս եւ ուրիշ կողմէ հայ թափօրներ եւս կը հասնին Բարձրագոյն Դրան առջեւ, բայց հայերուն կ'արգիլուի իրենց պահանջագիրը պաշտօնապէս տալ Եպարքոս Սայիտ փաշայի [ն]⁽¹⁶⁵⁾»:

Ճանկիրլեան եւ Կիտուր կու տան միայն բովանդակութիւնը ճառին, մինչ Պոլիսէն Թիֆլիսի Մուրնին առաքուած 5 Նոյեմբեր 1895 թուակիր նամակ մը կու տայ ամբողջութիւնն անոր: Ըստ այդ նամակին՝ Պէյլէրեան կը յայտարարէ թէ «ձմեռը կը հասնի, սրբազան, եւ Հայաստանի մէջ մեր քոյրերուն, եղբայրներուն եւ ամուսիններուն վիճակը, որ այնչափ անտանելի է՝ աւելի դառն կ'ըլլայ հետզհետէ: Ամէն օր լուրեր կը հասնին մեզի թէ առջի վիճակը ո՛չ միայն չէ թեթեւցած՝ այլ անչափ ծանրացած է, որ, ձմրան հետ մէկտեղ, մահը պիտի իջնէ մեր սիրելի երկրին վրայ»:

«Ա՛յ չենք դիմանար, սրբազան. տարի մըն է, որ Եւրոպան Սասունի արիւնայի ջարդէն յուզուած՝ մեր դատը ձեռք առաւ, ամբողջ տարի մը, որուն իւրաքանչիւր օրերը մէյմէկ տարի էին մեզի համար. անձկութեամբ սպասեցինք որ արդարութիւն [ն] ու խաղաղութիւնը վերջապէս իջնեն մեր երկրին վրայ. [գոնէ] այնքան հառաչանքներէ ետքը կարենանք վայելել ապահով ու հանգիստ կեանք մը, որուն իրաւունք ունինք: Վստահութիւն ունէինք Եւրոպայի արդարադատութեան վրայ, որ ա՛յ այս անգամ վերջ պիտի տար մեր ցաւերուն, եւ մեր արցունքներուն, ու գիտէինք որ ձեր հայրական հոգածութեամբ ամէն ատեն եւրոպական պետութեանց աչքին առջեւ կը դնէիք բոլոր այն հարստահարութիւններն ու խժղժութիւնները որոնց ենթակայ է հայ ժողովուրդը: Բայց ահա՛ դեռ բան մը չեղաւ մեր յոյսերը արդարացնող, եւ ահաւոր ճգնաժամը կը մօտենայ»:

«Սրբազան հայր, ձեզի կը դիմենք ահա, խնդրելով որ մեր յուսահատութիւնն ու բողոքը ներկայացնէք եւրոպական պետութեանց: Անոնց դիմեցէք եւ ըսէք որ ա՛յ համբերելու կարողութիւն չմնաց, ա՛յ դիմանալու ուժ չունինք մեր մէջը. ժողովրդին քուզովն ընտրուած էք դուք, եւ գացէք հո՛ն ուր կը գոչէ ձեզ ժողովրդին ձայնը»:

«Ըսէ՛ք այդ անկարեկիր Եւրոպային որ եթէ ընդհուպ բան մը չընէ մեզի համար, շատ շանցած ամօթէն պիտի կարմրի իմանալով

որ քրիստոնեայ ժողովուրդ մը բնաջինջ եղած է: Ըսէ՛ք զեսպաննե-
րուն՝ [թէ] մեզի իբր խաղալիք պէտք չէ [որ] թողուն աշխարհիս էն
զարհուրելի բռնաւորութեան ձեռքը: Ըսէ՛ք այս ամէնը, սրբազան,
եւ եթէ ան շարունակէ իր լուսթիւնը՝ զոնէ մենք գիտնանք թէ ի՞նչ-
պէս մեռնելու ենք»⁽¹⁶⁶⁾:

Իրականութեան մէջ՝ կէսօրուան մօտ Մայր Տաճար էին հասեր
ցոյցին հնչակեան ղեկավարները՝ առաջնորդելու համար ցուցարար-
ները դէպի Բարձրագոյն Դուռ: «Շարժումը կ'սկսի ու ամենայն ա-
րագութեամբ կը ծաւալի, [եւ] կ'ստանայ այնպիսի մակընթացութիւն
մը ճանապարհին վրայ, որ կարծես Պոլսոյ բովանդակ հայութիւնը
ուտքի ելած էր»՝ կը հաւատտէ Վարդեան⁽¹⁶⁷⁾: Բաւական դրական
ձեւով է որ կը ներկայացուի պատկերը հոս. ո՛չ Պոլսոյ «բովանդակ
հայութիւնն» էր հոն, եւ ոչ ալ «մակընթացութիւն» մը առաւ աշխարհ:
Կային ընդդիմադիրներ նաեւ եւ բացակայ էին բազմաթիւներ, որոնք
ներկայ չէին բնաւ: Ըստ վկայութեան մը՝ «նոյն աստու Մայր-եկե-
ղեցուն մէջ հաւաքւած էր մեծ բազմութիւն. քանի մը անձ իրենց այդ
օրուան ընելիքները կը հաղորդեն. ուրիշներ ճառեր կը կարդան.
օրիորդ մը ալ յաջող բան մը կը խօսի ու ժողովրդի այդ պատրաստու-
թեան եւ ոգեւորութեան մէջ՝ ձեր մէջ հանրածանօթ մի խմբագրի եղ-
բայրը, հոն գտնուելով, ժողովրդին կը զանայ [ու] կըսէ թէ իրենց
բոլոր ըրածներն ու ընելիքները տղայական են, իլլիմիէ են»⁽¹⁶⁸⁾, իր
բառովը»⁽¹⁶⁹⁾: Այսօր ամէն պատճառ կայ հաւատալու թէ այս «հան-
րածանօթ մի խմբագրի եղբայրը» կրնայ ըլլալ Տիգրանը՝ Արփիար
Արփիարեանի եղբայրը:

Այժմ փոքր ակնարկ մը ձանկիւլեանի տուած տեղեկութիւն-
ներուն վրայ նետուած՝ երեւան կը հանէ հեռուէն դիտուած դէպքի
մը մէկ պատկերը: Անկէ տարբեր չէ նիւ Եորքի Հայք երկշարաթա-
թերթին Պոլսոյ ականատես թղթակիցինը: Ա՛ն ալ ինկած լրատուական
սեղմ գիծերու մէջ՝ կու տայ նոյնքան թեթեւ մատչում մը պատահա-
րին: «Այս աստու»՝ կը գրէր անիկա 30 Սեպտեմբեր թուակիր իր նա-
մակով՝ «չուրջ 15 օրիորդներ կը ներկայանան Պատրիարքին եւ Հայ-
կական Խնդրոյն մասին տեղեկութիւն կը խնդրեն: Մինչդեռ Պատ-
րիարք Հայրն զիրենք հանդարտեցնել կ'աշխատէր՝ օրիորդներն «կեց-
ցէ յեղափոխութիւն[ը]» կ'աղաղակեն եւ [եկեղեցիէն] դուրս գտնուող
բազմութիւնն կ'ուղղուի դէպի Բ[արձրագոյն] Դուռն: Հոս զօրքի
խումբը ցրուել կը փորձէ բազմութիւնն, զինուորաց հրամանատարն
կրակ ընելու հրաման կուտայ, [եւ] կը սկսի կռիւ[ը]: Այս տողերս
գրած ատենս ճակատամարտը վերջ գտած չէ»⁽¹⁷⁰⁾: Իրականութեան
մէջ՝ «կէս ճամբուն վրայ... խաղաղ ցուցարարներու [ն] առջեւ կը
ցցուին հարիւրաւոր զօրքեր եւ ոստիկաններ, որոնք սուիներով կը

փորձեն արգիլել անոնց յառաջխաղացքը: Կառավարութեան յայտնի եւ անյայտ գործիչները անկարող ըլլալով մարդկային այդ հեղեղին առջեւ կանգնիլ՝ կ'սկսին կրակ բանալ: Իրարանցում մը, [եւ] կռիւք կը փրթի...: Սոփքաները կը զբոսեն թուրք ամբար, որ միանալով ոստիկաններուն եւ զինուորներուն՝ կ'սկսին գործի, որոնց բոլորովին ակամայ, կը պատասխանեն ցուցարարները»⁽¹⁷¹⁾: Ճիշտ է վարդեանի հաստատումը, որովհետեւ Պոլիսէն Լոնտոն քաջուած եւ 4 Հոկտեմբեր 1895 թուակիր հեռագիր մը կու գայ կրկնելու նոյնը. ըստ անոր՝ «ցոյցին ականատես վկաներ կ'ըսեն թէ հայերը չօգտագործեցին իրենց զէնքերը՝ մինչեւ որ հազարապետ Սերվէթ պէյ ոստիկանութեան հրահանգեց կրակել անոնց վրայ»⁽¹⁷²⁾:

Քանի մը օր ետք Հայէի Պոլսոյ թղթակիցը պիտի հաղորդէր իր 2 Հոկտեմբեր 1895 թուակիրով, թէ «ամբոյն շուրջ 2000 հոգի՝ երգելով կը մեկնին եւ կ'ուղղուին դէպի Բարձրագոյն Դուռն: Կէտիկ Փաշայի զառիվերէն ելնելնուն՝ տեղւոյն ոստիկանութիւնն զայնս արգելուլ կը փորձէ, [բայց] չյաջողիր: Ամբոյն երթալով կը սուարանայ, եւ թրքական ժամով] 5 1/2-ին⁽¹⁷³⁾ կը հասնի Բարձրագոյն Դրան առջեւ ուր կը հասնին եւ Պոլսոյ թաղերէ [ն] Հայոց խուռն բազմութիւն մը՝ ընդամէնը շուրջ 5000 հոգի: Մի քանիներ աղերսագիր ի ձեռին կը յառաջանան, [սակայն] յետս կը մղւին: Պաշտօնեայք կը ծանուցանեն թէ թուղթն ձգելով իրենք հեռանալու են: Երիտասարդք կը պատասխանին թէ «պատւիրակութիւն պիտի անեն՝ Եպարքոսին հետ տեսակցելու, թէ իրենք անգէն են եւ կրնան անգէն ըլլալնին հաստատելէ վերջ միայն ներս ընդունուիլ, եւն.»: Պաշտօնեայք սպանալիօք ցրւելու հրաման կուտան եւ ապա [ներկաներէն] մի քանիներ կը հրեն իսկ: Երիտասարդք կրակ կ'ընեն, [եւ] պահած ոստիկանաց եւ ժանտարմաներու խումբեր երեւան կելնեն»⁽¹⁷⁴⁾:

Իր կարգին՝ լոնտոնեան Փոսթ թերթն այս բոլորը տալէ ետք՝ կը կատարէ կարգ մը յաւելումներ: Ըստ անոր՝ օսմանեան ուժերը ցրուեցին հայերուն կազմած թափօրը, որ հեռացաւ զանազան թաղերէ ներս, քիչ ետք, սակայն, հաւաքուելու համար կրկին՝ կանխորոշուած տեղ մը: «Հոն՝ ոստիկանութեան նախարարին թիկնապահը՝ հազարապետ Սերվէթ պէյ խօսեցաւ անոնց հրահանգելով որ աղերսագիրը տան իրեն: Կարգ մը տեղեկութիւններ կ'ըսեն թէ անիկա անուանարկեց հայերը: Ամէն պարագայի՝ ջղայնացան վերջինները եւ սկըսան պոռալ: Ապա զէնքեր սկսան շաչել: Սերվէթ պէյն սպաննուեցաւ եւ վիրաւորուեցան կարգ մը ոստիկան-զինուորներ: Յաջորդեց զիր-կընդիստուն կռիւ մը»⁽¹⁷⁵⁾:

Այս բոլորին վրայ որոշ յաւելում մը կատարելու կու գայ վկայութիւնը այլ ականատեսի մը, որուն 19 Սեպտեմբեր/1 Հոկտեմ-

բերի մէկ գիրը կ'ըսէ ի միջի այլոց, թէ «ժամը 5-ին ժողովուրդը ճամբայ կ'իյնայ Մայր-եկեղեցի [է]ն դէպի Պապը Ալի, ուր կը գտնուի Բարձրագոյն Դուռը. ուրիշ տեղերէ ալ, խումբով կամ առանձին, կը դիմեն նոյն տեղը: Մայր-եկեղեցիէն ելող բազմութիւնը երգելով կը յառաջանայ մինչեւ Պապը Ալիի մօտերը. հոն իրենց կը դիմաւորեն ձիաւոր ոստիկաններ եւ անոնց առջեւ կը կտրեն: Հայերը կ'ըսեն թէ Բարձր. Մեծ Եպարքոսին ուղղած թուղթ մը ունին, զոր իրենց ձեռքովը պիտի յանձնեն: Ոստիկաններ արգիլելու համար անոնց առաջ գնալը՝ կը յարձակին հայերուն այդ խումբին վրայ: Հայերը կրակ⁽¹⁷⁶⁾ կը պոռան, եւ ահա կը սկսի զնդակներու տեղատարափը ճիշտ Բ[արձրագոյն] Դրան առջեւ: Փախչող փախչողի: Պապը Ալիի ապարանքին ապակիները շրխր-շրխր վար կ'իյնան, քանի մը ոստիկան կը փութն գետին. հազարապետ մը եւ հարիւրապետ մըն ալ սպան [ն]ւած են: Ձիաւոր ոստիկաններ ամէն կողմ կը վազեն եւ վայրկենապէս ամբողջ Պոլսի փողոցները ոստիկան-զինուորներով կը պատուին: Հայերը կը դիմադրեն բայց ահագին զօրութեան առջեւ տեղի կուտան: Ձերբակալութիւններ կը սկսեն. կռուքերով կը փոխադրեն, ոստիկաններու ընկերակցութեամբ, ձերբակալուածներն ու վիրաւորուածները: Ժամը ճիշտ 5 1/2-ին սկսած էր այս ցոյցը: Շատեր կը յաջողին սակայն փողոցներէ փախչելով ազատի: Հայերը կորսնցուցին այդտեղ 30-40 հոգի»⁽¹⁷⁷⁾:

Հոկտեմբեր 1-ի իր առաջին այս գիրէն ետք՝ Խաչ-Պապեան կրկին անդրադարձաւ այս դէպքերուն իր 8 Հոկտեմբեր 1895 թուակիրով, սակայն այս անգամ շա'տ աւելի մանրամասն կերպով: Ըստ անոր՝ 30 Սեպտեմբերի «կռիւին շարժառիթ կ'ըլլան թուրքերը. հայերը երբ ճամբայ կ'իյնան դէպի Պապը Ալի՝ իրենց առջեւ ոստիկան զինուորներու պատնէշ մը կը գտնեն. հայերը կը յայտնեն թէ Մեծ Եպարքոսին աղերսագիր մը ունին զոր իրենք իրենց ձեռքով պիտի տան. ոստիկանները կը պահանջեն որ իրենց յանձնուի թուղթը եւ հայերն ալ ձգեն [ու] երթան. մերիները կը դիմադրեն. ոստիկանները կը քաշեն իրենց սիւնները՝ քիչ մը հայ [ու արիւն] նորից թափելու համար. հայերն ալ, ինքզինքին պաշտպանելու նպատակով, կը ստիպուին զնդակով պատասխանել:

«Որոշուած էր Երկուշաբթի օր (18/30 Սեպտեմբեր) ժամը 5 1/2-ին գտնուի Բարձրագոյն Դուռ. ու ամէն կողմէ, խումբերով կամ առանձին, հայեր կը դիմեն Պապը Ալի: Չէմպէրլի-թաշ, Թավու [գ]-բազար եւ Սիրքէճի դիմադրութիւններ տեղի կ'ունենան արգիլելու համար հայերուն Պապը Ալի դիմումը⁽¹⁷⁸⁾: Բարձրագոյն Դուռը հասնող հայերուն ալ նոյն տմարդի դիմադրութիւնն ու անարգանքները: Թիւրքերը առաջւրնէ իմացած ըլլալով թէ այդ օրը հայերը պիտի յար-

ձակից — իրենց խօսքովը — Պապը Ալիի վրայ, հոն բոլոր փողոցները զինուորներ կեցուցած եւ ձիաւոր ոստիկան-զինուորներ պահած էին այլ եւ այլ տեղեր, որ [ոնցմով] անմիջապէս շրջապատել ու զեցին այդ օրւան ապստամբ հայերը. ամէն փողոցի անցուղարձը արգիլեցին վայրկենապէս: Բայց հայերն ալ բաւական խելացի կը դառնին. ճիւղաւորեցան եւ այլ եւ այլ փողոցներէ յաջողեցան փախչելով ինքզինքնին ազատել՝ դէմերնին ելլող ոստիկաններուն [վրայ] կրակելով»⁽¹⁷⁹⁾:

Փախուստ տալ՝ ըրին հայերէն սմանք, եւ նոյնիսկ՝ հնչակեան խումբերէն, զորոնք արգիլել ջանաց Սահակեանը՝ ցոյցին դեկավարը⁽¹⁸⁰⁾: Փախուստ տալ՝ ըրին սակայն թուրքե'րը նաեւ: Ըստ վկայութեան մը՝ «թուրք փաշաները հետզհետէ կը հասնին եւ ահ ու զոդով կը մտնեն իրենց պաշտօնատեղիները...: Հետաքրքրական էր տեսնել թէ անոնք, այդ խրոխտ էֆենտիները, ինչպէս սմբած էին. շատեր առանց երկար սպասելու իրենց պաշտօնատեղին, կառք մտած՝ զոդողալով կամուրջ կուգային եւ շոգենաւերը մտնելով կը փախչէին»⁽¹⁸¹⁾:

Ինչ որ ալ ըլլային իրականութիւնները՝ շարժեցաւ պոլսահայութիւնը՝ խմբովին թէ առանձին, Գում Գափուի եկեղեցիէն թէ Պոլսոյ զանազան շրջաններէն, եւ ցոյցին մասնակցելու թէ զայն դիտելու համար: «Հետզհետէ մեր խումբը ստուարանալ սկսաւ»՝ կը գրէ կարապետ Սահակեանն իր յուշերուն մէջ յետագային, «բայց ոչ այնպէս՝ ինչպէս որ հրահանգուած էինք. պոռացիներ տղայոց մայթերէն վար իջնալով սեղմուիլ մեզի, նոյն ատեն մեր ետեւը նայելով տեսանք որ զապթիլէները⁽¹⁸²⁾ իրենց ձիերուն վրայ, ճամբուն լայնքը բռնած, մեր կռնակէն կը յառաջանան:

«Թրամուէլի»⁽¹⁸³⁾ գիծը հասանք: Ընկերներ դիտել տուին, թէ տղաքը կասկածոտ են թէ որո՞ւ պիտի հետեւին: Մետաքսի լաթը կարոյին յանձնեցի, որը «պատանքդ է» ըսելով ուսերուս վրայ փռեց [զայն]: Այդ միջոցին Պարսից Դեսպանը զոյգ մը նժոյգ լծուած բաց կառքի մը մէջ մեր խումբը ճեղքեց եւ չորս կողմ ուշադրութեամբ դիտելով անցաւ: Անգամ մը եւս պոռացիներ մերիներուն որ վար գալով սեղմուին մեզի: ... Զեյլոյի երկու զինուորները, Ազրայիլ (Սաղաթիէլ էքշիեան), Նշան Միրաքեան եւ Քղեցի Աբրահամը աջէս եւ ձախէս թիկնապահներու պէս խրոխտ եւ անվախ կը քալէին:

«Պապը Ալիի դրան առջեւ հասած էինք, որուն վանդակեայ դռները իրենց ծինիներուն վրայ դառնալով մերժեցին մեզ ներս ընդունիլ, եւ վերէն Նազրմ փաշայի անձնական թիկնապահը մոխրագոյն ձիու մը վրայ խումբ մը ոստիկաններով դէպի մեզ յառաջացաւ. այդ ատեն ձեռքս վեր առնելով բարձրաձայն խօսեցայ:

«— Էֆէնտինն'ը, մենք կուուի չենք եկած: Մենք, խուժք մը օսմանեան հաւատարիմ հպատակներս՝ եկած ենք խնդրանք մը մատուցանելու, աղերսագիր [մը] տալու. մենք պիտի խնդրենք ձեզմէ որ շարգիլէք մեզ, այլ բարեհաճիք դռները բանալով [ձեռքիս թուղթը ցուցնելով] այս աղերսագիրը ներկայացնելու նորին Բարձրութիւն Մեծ Եպարքոսին, եւ երկու վայրկեանէն դուրս գալու, միայն երկու հոգիի եւ ոչ ամբողջ խուժքին:

«Ոստիկանները՝ դէմ առ դէմ կեցած՝ մեր խօսքերը լրիւ լսեցին, բայց տեսանք որ ուրիշ կողմեր խառնաշփոթութիւն եւ իրարանցում կ'ըլլար, մերինները կը ձերբակալուէին եւ կը գանակոծուէին...: Յանկարծ կոնակէս մէկը ուժով մը գրկեց զիս այնպէս՝ որ չէի կրնար թեւերս շարժել. դուրսս դարձնելով տեսայ որ գաղտնի ոստիկան մըն է եւ նոյն զապթիլէները հրացանները ուղղելով՝ «Մի՛ շարժիր» հրամայեցին: Երկու ոստիկան թեւերս պինդ բռնած՝ վրաս կը խուզարկէին:

«— Էֆենտիններ, ըսի, հարկ չկայ այդքան վախի, ես վտանգաւոր մէկը չեմ, վրաս բան չունիմ վնասակար, ամբողջ ունեցածս այս թուղթն է, ուրիշ ոչինչ:

«Տեսնելով որ խօսք պիտի չհասկնան եւ մենք վայրագութեան լուռ զոհերը պիտի ըլլանք՝ մերիններուն հրամայեցի որ կրակեն: Աբրահամին ատրճանակը աջ կողմէս որոտաց եւ նազրմին թիկնապահին իր ձիուն ստրեբուն տակ փռուիլը այս աչքերս տեսան⁽¹⁸⁴⁾: Զարէս Ագրայիին խոշոր դարատաղը⁽¹⁸⁵⁾ կը գոռար անդադար: Մերինները ոյժ առին երբ ոստիկանները իրար ետեւէ գետին կը փռուէին: Ես թէեւ կալանաւոր՝ բայց կը հրճուէի թշնամի դիակներուն ի տես, որոնց թիւը երկոտասանեակի մը հասաւ:

«Մեր կողմէն առաջին նահատակը Աբրահամը եղաւ: Կուրը կը շարունակուէր երբ զիս քայեցուցին»⁽¹⁸⁶⁾:

Սահակեանի ձերբակալութիւնը չնշանակեց աւարտն ամէն ինչի: Ընդհակառակը՝ հրապարակէն ճառագայթող փողոցներէն վեր ու վար վագոզ մարդկային խուճապ մը կար հիմա, որուն ունկերէն ներս շաչող ու զնգացող շառաչները փամփուշտներուն փոթորիկ մըն էր որ ստեղծեցին ամէնուրեք: Թէ իրաւամբ ի՞նչ պատահեցաւ այդ պահուն՝ դժուար թէ գայ գրիչի: Կը բաւէ միայն ըսել, թէ անոր մասին գրողներն եղան կա՛մ հեռուէն ականատեսներ եւ կամ ալ անոնք՝ որոնք պատահածներն իմացան տեղեկատուներէն: Իսկ Լոնտոնի Հնչա՞կը:

Սակայն հազի՛ւ թէ ցոյցը պատահած Պոլսոյ մէջ՝ Լոնտոն նստած «Հնչակեան Կուսակցութեան Կենտրոն»ը Հնչակի թիւ 16-ին ընկերացող յաւելուածով մը ի միջի այլոց յայտարարեց իր ընթեր-

ցողներուն, համակիրներուն եւ հակակիրներուն, եւ մնացեալ բոլոր հայերուն, թէ «Երէկ, 18 Սեպտեմբեր[ին], 4. Պոլսում տեղի ունեցաւ մի մեծ ու պատմական դէպք: Տեղի ունեցաւ մեծ [եւ] արիւնահեղ ցոյց՝ նախաձեռնութեամբ, առաջնորդութեամբ ու զործադրութեամբ Հնչակեան Յեղափոխական Կուսակցութեան:

«Ահա երկրորդ անգամ Բիւզանդիոնի երկնքի տակ, Պոսֆորի ափերում, թիւրքական բռնակալութեան գիւն ահաւոր դրդիւնով պայթում է Հնչակեան Յեղափոխական Շարժումը եւ կրկին անգամ հոսում հայկական արիւնը սուլթաննիստ քաղաքում»⁽¹⁸⁷⁾: Իսկ քանի մը օր ետք, 6 Հոկտեմբերին, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Պոլսոյ Կեդրոնական Կոմիտէն եկաւ արձագանգելու կատարուածին եւ յայտարարելու թէ «հայութիւնը ճգնաժամի մէջ է: Հնչակեաններու ձեռքով կազմակերպուած Սեպտեմբեր 18-ի խաղաղ ցոյցը, որով կ'ուզէին Մայր-Հայրենիքի ահեղապէս անտանելի վիճակը վերջին անգամ հաւաքաբար պարզել թուրք կառավարութեան ու Եւրոպայի առջեւ — այդ ցոյցը կոտորածի եւ անմիտ ու զազանային վրէժխնդրութեան առիթ մը եղաւ թուրք բռնապետութեան համարուող աստիկանութիւնը ինքն էր որ զինեց ու զրգոց հայերուն դէմ մայրաքաղաքին ասֆեարներն»⁽¹⁸⁸⁾ ու թուրք խուժանը»⁽¹⁸⁹⁾:

Դէպքն ունեցաւ անմիջական արձագանդ եւ արեւմտեան պետութիւններու Պոլսոյ ղեսպանները շուշացան կատարուածը տեղեկագրելու իրենց պատկան իշխանութիւններուն: Այսպէս, նոյն օրն իսկ, 30 Սեպտեմբերին, Պոլսոյ Ֆրանսական ղեսպան Փոլ Քամպոնը հաղորդեց Ֆրանսայի արտաքին գործերու նախարար Հանոթոյին, թէ «բաւական նկատառելի թիւով հայեր, որոնք կ'երեւին բոլորովին խեղճ վիճակով, այսօր ցոյց մը կատարեցին Բարձրագոյն Դուռին կողմերը: Անոնց դէպի Դուռ երթի ճամբուն վրայ՝ անոնք սպաննեցին ոստիկան մը, որ սպրդեր էր խմբաւորումին մէջ: Նոյնհետայն յարձակումի ենթարկուելով զաղտնի ոստիկաններու եւ հեծեալ ոստիկան-գինուորներու կողմէ՝ արիւնալի բախումներէ ետք անոնք ցրուեցան քաղաքին բոլոր կողմերը:

«Ճնշումն եղաւ անխնայ:

«Մոլլաները»⁽¹⁹⁰⁾ ընդգիմացան հայերուն եւ ցրուելով քաղաքին մէջ՝ իրենք իսկ ձերբակալեցին այն բոլորը որոնց հանդիպեցան եւ գէշ կերպով անուանարկեցին զանոնք:

«Ձերբակալուածները զանգուածային են: Այն բոլորը որոնց կասկած մը կայ հայ ըլլալուն՝ ձերբակալուեցան եւ ենթարկուեցան բրտութեան:

«Սուլթանը գինուորական պատրաստութիւններու ձեռնարկեց Երլազգի շուրջ:

«Պէտք է ընդունիլ, որ հիմնովին ճնշուած է ցոյցը: Սակայն կարելի չէ գիտնալ թէ մոլլաներու ազդեցութեան տակ Պոլսոյ մահ-մետական ժողովուրդը ծայրայեղութիւններու պիտի չդիմէ՞» քրիստոնեաներու դէմ»⁽¹⁸¹⁾:

Սա առաջին հեռագիրէն քանի մը օր ետք, Քամպոնն իր կառավարութեան յղեց 3 Հոկտեմբեր թուակիր եւ շա'տ աւելի մանրամասնեալ տեղեկագիր մը, որուն համաձայն՝ «այսօր յստակ կերպով ծանօթ են պատճառները 30 Սեպտեմբերի արիւնոտ ցոյցին...: Նախապէս անոր օրը որոշուած էր 22 Սեպտեմբերը⁽¹⁸²⁾: [Բայց] ինչ ինչ պատճառներով՝ անիկա փոխադրուեցաւ յետագայ թուականի մը:

«Սեպտեմբեր 28-ի Եարաթ օրն ստացայ հայկական դադտնի կուսակցութեան Պոլսոյ Հնչակեան Մասնաճիւղէն այն նամակը որուն պատճէնը Զերդ Վսեմութիւնը պիտի գտնէ ներփակեալ: Կոմիտէն կը յայտարարէր թէ հայերը նպատակ ունենալով խաղաղ ցոյց մը կազմակերպել՝ ի յառաջագունէ կը մերժէին պատասխանատուութիւնը [այն] հետեւանքներուն, որոնք կրնային յառաջ գալ ոստիկանութեան եւ զօրքին միջամտութեամբ: Միեւնոյն նամակն առաքուեցաւ միւս դեսպանատուներուն ալ, ինչպէս որ գայն ստացան ոստիկանութեան նախարարը եւ ընդհանուր դատախազը:

«Օսմանեան իշխանութիւնները հաւատ չընծայեցին այս հաստիացումին եւ առաջին իսկ վայրկեանէն ձեռնարկուեցաւ միջոցառումներու՝ ցոյցն արգիլելու համար նոյնիսկ ուժով:

«Երկուշաբթի առաւօտ, 30 Սեպտեմբերին, ստացայ խնդրագիրը⁽¹⁸³⁾, որուն մէկ օրինակը Զերդ Վսեմութիւնը պիտի գտնէ ներփակ: Այն վայրկեանէն երբ Թերափիա⁽¹⁸⁴⁾ ինձի կը հասնէր անիկա՝ Պոլսոյ մէջ տեղի կ'ունենար յայտարարուած ցոյցը:

«Առաւօտեան ժամը 2-ի ատենները տղամարդերէ, կիներէ եւ մանուկներէ կազմուած բազմութիւն մը ներկայացաւ Հայոց Պատրիարքարանը: Սուրբ Պաշի տունն էր եւ եկեղեցին լեցուն էր բազմութեամբ, եւ ուր կիրակի առաւօտ 5000 հայեր հաղորդուեցան նահատակուելու հաստատ համոզումով: Պատրիարքը որ կը գտնուէր Պէօյիւք Տէրէի ամառանոցը՝ երեկոյեան վերադարձեր էր Գում Գափու՝ ի լուր պատրաստուող խոսովութեան: Բազմութիւնն ուզեց տեսնել զինք: Անիկա անոր ներկայացուց այն տիւրը վիճակը, ուր կը գտնուէր հայ ժողովուրդը: Անիկա կը յուսար Եւրոպայի միջամտութեամբ վերջ մը տեսնել իր հարստահարութիւններուն: Տարիէ մը ի վեր համբերած էր անիկա՝ սպասելով բարենորոգումներու: [Իսկ] անոնք չէին կատարուած: Լքուած զգալով՝ հայերը որոշեցին ի-

րենք իսկ խնդրագիր մը ներկայացնել մեծ վեղիրին՝ անոր բացատրելու համար իրենց դժբախտութիւնները եւ բարենորոգումներ պահանջելու:

«Պատրիարքը փորձեց տարհամոզել զանոնք, որ Բարձրագոյն Դուռ չերթային...: Ինք յանձն առաւ անձնապէս Բարձրագոյն Դուռ յանձնել անոնց խնդրագիրը, եւ անոնցմէ խնդրեց ցրուիլ: Հայերը պատասխանեցին թէ իրենք գիտէին որ իրենց Պատրիարքը որքան էր պաշտպանած իրենց խնդիրը Բարձրագոյն Դրան մօտ, սակայն յստակ էր որ ապարդիւն էին անցած անոր ջանքերը...: Հայութիւնը կը փափաքէր ցոյց մը կատարել փաստելու համար որ անիկա ամբողջութեամբ թիկունք կը կանգնէր իր հոգեւոր պետին...: Ուստի անոնք պահանջեցին Պատրիարքէն միանալ իրենց եւ ընկերակցիլ դէպի Դուռ: Իզմիրլեան Սրբազանը դժուարութեամբ հասկցուց անոնց թէ ինք չէր կրնար ընկերանալ իրենց եւ զրկեց զանոնք:

«Նոյն պահուն էր որ Սուլթան Մահմուտի⁽¹⁹⁵⁾ հրապարակին մերձակայքը՝ անկիւնը պողոտայի մը, որ ուղղակի կ'իջնէր Բարձրագոյն Դուռ՝ կը կազմուէր նոր ցոյց մը, որ ամէն վայրկեան կը մեծնար զանազան կողմերէ հասնող հայերով:

«Իմ թիւ 128 եւ 131 հեռագիրներս յայտնած են Ձերդ Վսեմութեան թիւը ցուցարարներուն, որ 2000ի մօտ է: Բարձրագոյն Դրան [մուտքի] վանդակին դէմ էր որ սպայ մը փորձեց կեցնել զանոնք ոստիկան-գիւնուորներով: Հայերը պատասխանեցին... որ միայն խնդրագիր մը յանձնել կ'ուզէին Մեծ Վեղիրին... եւ թէ եթէ չդպէին իրենց՝ պիտի մեկնէին ցոյցին նպատակն իրագործելէ ետք:

«Սպան պատասխանեց իրենց թէ երբեք պիտի չթոյլատրէր որ անցնէին եւ խստօրէն հրահանգեց անոնց ցրուիլ:

«Անոնց մերժումին վրայ՝ անիկա հրահանգեց ոստիկան-գիւնուորներուն յարձակիլ եւ կը թուի թէ հարուածելէն ետք ցուցարարներէն շատերուն՝ հայու մը կողմէ տրուած ատրճանակի հարուած մը ուղղակի սպաննեց սպան: Ձերդ Վսեմութիւնը տեղեակ է թէ ցոյցն ի՞նչպէս աւարտեցաւ կոխով: Ամէն կողմ ցրուած սպաննուածներն ու վիրաւորները անմիջապէս ծածկեցին գետինը...»⁽¹⁹⁶⁾:

Իր կարգին՝ Պոլսոյ ամերիկեան դեսպան Թերէլը միայն 2 Հոկտեմբերին, դէպքերէն երեք օր ետք էր որ ի միջի ալոց հաղորդեց Միացեալ Նահանգներու պետական քարտուղար Ռիչըրտ Օլնիին, թէ «Երկուշաբթի [օրը] քանի մը հարիւր հայեր քալեցին դէպի Դուռ յայտնապէս դարձան մը պահանջելու համար իրենց տառապանքներուն: Պատրիարքը փորձեց արգիլել զայն⁽¹⁹⁷⁾: Բախում մը տեղի ունեցաւ հայերու եւ ոստիկանութեան միջեւ: Սպաննուած են մօտ 60 թուրքեր եւ հայեր — ալոց կարգին՝ թուրք հազարապետ մը — եւ

վիրաւորուած՝ բազմութիւններ: Ատրճանակ կը կրէին Հայերը»⁽¹⁹⁸⁾: Յաջորդ օրը, սակայն, Քերէլ տուաւ կարգ մը այլ մանրամասնութիւններ եւ հաղորդեց թէ Պատրիարքարան «հաւաքուած քանի մը հարիւր մարդեր շարժեցան դէպի Դուռը, որ կը գտնուէր Պատրիարքի պալատէն»⁽¹⁹⁹⁾ թերեւս մէկ մղոն հեռու: այդ վերջինը կը գտնուի հայկական թաղամասին մէջ:

«Գրեթէ նոյն ատենները հայերու երկու իմբաւորումներ շարժեցան դէպի Դուռը՝ հայկական թաղամասի այլ կողմերէն:

«Իրարու միանալով Կոստանդինի մրտաձ սիւնէն ոչ-շատ հեռու տեղ մը՝ հայերը հասեր էին Դուռէն քանի մը քայլ հեռու կէտ մը՝ երբ ոստիկանութիւնը փորձեց կասեցնել անոնց յառաջընթացը: Արդիւնքն եղաւ բախում մը, որուն ընթացքին ատրճանակներ գործածուեցան ազատօրէն հայերուն կողմէ: Հոս հազարապետի աստիճանով թուրք սպայ մը սպաննուեցաւ: Սպաննուեցան ոստիկաններէն ոմանք ալ: Թէ ո՞ր կողմն սկսաւ սպանդը՝ խնդրական է: Սակայն տիրող կարծիքն այն է որ հայկականն է անիկա: Փոփոխական է նաեւ կարծիքը սպաննուածներու թելին շուրջ, որ զանազաններու կողմէ կը գնահատուի 15-50-ի միջեւ: Ստոյգ թիւը երբեք պիտի չգիտցուի»⁽²⁰⁰⁾:

Քերէլ կը խօսի սպանութեանը մասին թուրք հազարապետի մը՝ առանց սակայն բանալու ծալքերն այդ արարքին: Քամպոն պիտի խօսի անոր մասին միայն 2 Հոկտեմբերի իր տեղեկագիրով: Ըստ այդ վերջինին՝ որ մէկ ամփոփումն է 30 Սեպտեմբեր-2 Հոկտեմբեր երկարած գուռող ղէպքերուն եւ կը մնայ հիմնուած՝ ականատես վկաներու վստահելի տուեալներուն վրայ՝ «երէկ առաւօտ հայերու մեծ թիւով խումբեր ուղղուեցան դէպի Գում Գափու եւ Սուլթան Մահմուտի»⁽²⁰¹⁾ դամբանը: Ըամբան ոստիկաններ ցրուեցին շատերն անոնցմէ: Պատրիարքն իրենց հետ տանելու զուր փորձէ մը եւ ոստիկան-զինուորներու հետ կարճ բախումէ մը ետք՝ Գում Գափուի խումբը հաւաքուեցաւ Պատրիարքարանի եկեղեցիին ետին: Սուլթան Մահմուտի խումբը, որ կը բաղկանար մօտաւորապէս երկու հազար հոգիէ եւ կ'առաջնորդուէր եկեղեցականի մը կողմէ՝ ուղղուեցաւ դէպի Դուռ [ժամը] տասի եւ տասնմէկի միջեւ: Ոստիկան զինուորներու գունդ մը որ կը գտնուէր հազարապետի մը հրամանատարութեան ներքեւ՝ կեցուց զայն: [սակայն] ասիկա⁽²⁰²⁾ ուզեց շրջանցել՝ հակառակ հրահանգին այս սպային, որ հրամայեց յարձակիլ եւ կրակել: Հայերը փոխադարձեցին: Սպաննուեցաւ հազարապետը եւ վիրաւորուեցան տասնեակ մը ոստիկան-զինուորներ եւ վախուճ մըն ալ հայեր:

«Ամբոխը ցրուած ըլլալով՝ ոստիկաններն ու մտլլաները որոնք մեծաւ մասամբ զինուած էին մահակներով եւ ատրճանակներով՝ հե-

տապնդեցին [Հայերը] բոլոր օրուան տեղուիթեան: Կը նշուին վայրագութեան բազմաթիւ արարքներ: Այս խառնակութիւնները տեւեցին ամբողջ գիշերը»⁽²⁰³⁾:

Սեպտեմբեր 30-ի ցոյցը հազիւ սկսած՝ Պոլսոյ անգլիական դեսպան Սըր Ֆրիտֆ Բըրին, սակայն, շուշացաւ տեղեկագրել պատահարն իր կառավարութեան: Ըստ Սուլպըրբիին առաջուած առաջին այս տեղեկագիրին, որմէ Կիւրիւն կու տայ որոշ հատուած մը միայն՝ զայն վերցնելով Անգլիոյ Արտաքին Գործերու Նախարարութեան արխիւներէն՝ «... ամսուն 28-ին դեսպաններուն առաջուած գրութիւն մը որ կը կրէր կնիքը յեղափոխական Հնչակեան Կուսակցութեան՝ կը յայտարարէր թէ Հայերը բացարձակ կերպով խաղաղ ցոյց մը կազմակերպելու վրան էին՝ իշխանութիւններուն յայտնելու համար բարենորոգումներէն իրենց ուզածները...: Այս ցոյցը տեղի ունեցաւ 30 Սեպտեմբերին, բայց հակառակ կատարուած յայտարարութեան՝ դժբախտաբար խաղաղ կերպով չընթացաւ անիկա: Յուցարարներուն բոլորն ալ զինուած էին նոյն տեսակի ատրճանակներով եւ դանակներով, որոնք շատ հաւանաբար հայթայթուած էին իրենց կազմակերպիչներուն կողմէ: Ամէն պատճառ կայ կարծելու թէ Հնչակեան Կուսակցութեան նպատակն էր խռովութիւն մը ստեղծել եւ արիւնահեղութիւն մը յառաջացնել, որպէսզի եւրոպական պետութիւնները միջամտէին Հայերուն ի նպաստ:

«Կ'ըսուի թէ ցոյցէն առաջ 3000 Հայեր հաղորդուեցան զանազան Հայկական եկեղեցիներու մէջ՝ մահուան պատրաստուելու համար:

«Սեպտեմբեր 30-ի առաւօտեան Հայեր մեծաթիւ կերպով խմբուեր էին քաղաքին զանազան թաղերուն մէջ: Համախմբումին կարեւորագոյնը կայացաւ Գում Գափուի եկեղեցիին մէջ: Ապա անոնք ուղղուեցան դէպի Բարձրագոյն Դուռ: Ըստ ականատես վկայի մը՝ անոնք 2000 մը կային:

«Կը թուի թէ իշխանութիւնները ձեռք էին առեր որոշ միջոցառումներ՝ որպէս հակացոյց: Փողոցներուն մէջ տեսնուած է մէկտեղումը անընական թիւով աստուածաբանական ուսանողներու եւ այլ թուրքերու, որոնք զինուած էին մահակներով:

«Ըստ բոլոր երեւոյթներուն՝ ոստիկանութիւնը ճիգ է թափեր տարհամոզելու համար խմբաւորումը, որ խաղաղօրէն քաշուէր:

«Ոստիկանութեան նախարարը յայտնած է դեսպանատունի թարգմաններէն մէկուն, թէ հրահանգեր է զօրավար Սերվէր⁽²⁰⁴⁾ պէյին, սպայ մը որուն վրայ ունէր մեծ վստահութիւն՝ տարհամոզել ամբոխը որ ցրուէր:

«Յուցարարները մերժելով այդպէս ընել եւ յայտարարելով, որ կ'ուզէին Բարձրագոյն Դուռ երթալ՝ Սերվէթ պէյ հրահանգեր է իր մարդերուն ետ մղել ամբոխը՝ իրենց սուրբերուն տափակ կողմերը եւ զէնքերուն կոթերը օգտագործելով: Նոյն վայրկեանին երկու ոստիկան-զինուորներ ձերբակալեցին ցոյցին առաջնորդը, որ յայտարարութիւն մը կը կրէր եւ զոր որոշած էր յանձնել Բարձրագոյն Դուռ: Ասկէ ետք էր որ սկսաւ հրացանաձգութիւնը»⁽²⁰⁵⁾:

Յետագայ քանի մը հեռագիրներով զեսպան Քըրին տակաւին եկաւ աւելցնելու թէ ցոյցի միջոցին «փոխանակուեցան զէնքի հարուածներ ու սպաննուեցաւ ոստիկան-զինուորներու սպայ մը: Ինկան մօտ տասնհինգ ոստիկան-զինուորներ եւ վաթսուն հայեր: Նոյնհետայն ոստիկանութիւնն սկսաւ ցրուել ցուցարարները՝ զանոնք հալածելով եւ մեծ մաս մըն ալ ձերբակալելով անոնցմէ»⁽²⁰⁶⁾. աւելին՝ «կ'երեւի թէ ոստիկանները յարձակեր են հայերուն վրայ, հարուածեր են զանոնք իրենց սուրբերուն տափակ կողմերովը ու զէնքերուն կոթովը, եւ ձերբակալեր են անոնց առաջնորդը, բայց կասկածէ վեր է որ նախ հայերն են զէնք պարպեր»⁽²⁰⁷⁾:

Վերջին սա փոքր մէջբերումով՝ Քիամուրան Կիւրիւն կը փորձէր ցոյց տալ, թէ անմեղ էին թուրքերը, եւ ինչ որ պատահեցաւ՝ եղաւ հայերո՛ւն իսկ կողմէ՝ առա՛նց ալ նկատի առնելու որ ծանրօրէն զինուած հայերն էին որ սպաննուեր էին մեծաթիւ կերպով, մինչ լո՛ւկ մահակներով զինուածները՝ թուրքերը՝ հազի՛ւ թէ:

Իր կարգին, սակայն, Պոլսոյ գերման զեսպան Տրայհէր Տոն Զաուրմանն իր թիւ 75 եւ 30 Սեպտեմբեր 1895 թուակիր հեռագիրով հաղորդեց, թէ «այսօր, կէսօրէն առաջ, Պոլսոյ մէջ հայերը ցոյց մը կատարեցին [Բարձրագոյն] Դուռին եւ այլ պաշտօնատուներու առջեւ, ուր արիւնագին բախումներ տեղի ունեցան ոստիկանութեան հետ: Այդ պահուն մեծ յուզում մը կը տիրէր Պոլսոյ մէջ: Մոլլաները հաւաքուեցան փողոցներուն մէջ: Զկանչուեցան զինուորները: [Դէպքին] ականատես եղան հիւրերս՝ Իշխան Հոլլթայնը եւ Պր. Զաուրման»⁽²⁰⁸⁾:

Դեսպանին յիշած ականատես հիւրերն էին իր զարմիկը Զաուրման, որ կը պատկանէր իշխանական խոնարհ դասի մը, եւ Շլեզվիկ-Հոլլթայնի իշխան Ալպերթօ Հոլլթայնը:

Քանի մը օր ետք, սակայն, գերման զեսպան Տոն Զաուրման պիտի շարունակէր յայտնել Պերլինի իր մեծաւորներուն, թէ թրքական իշխանութիւններն իրենք են պատասխանատուն արիւնագին ծայրայեղութիւններուն, որովհետեւ ի յոռաջագունէ իմաց տրուեր էր

իրենց որոշուած ցոյցին մասին, եւ փոխանակ պարզօրէն արգիլելու զայն զինուորներու միջոցով, ձգեցին որ կայանար անիկա: Անոնք զրգուեցին [Թուրք] ամբօրը, զոր ոստիկանութիւնը զինած էր գաղտնօրէն զէնքերով, մանաւանդ հաստ բիրերով, եւ ստիպեցին զայն յարձակելու ցոյցին վրան ու ցրուել զայն»^(208ա):

Դրանագիտական այս թուղթերու տուեալներուն վրայ յաւելում մը կատարելու կու գայ ձանկիւլեանը, որուն համաձայն՝ Բարձրագոյն Դրան առջեւ տեղի ունեցող վէճի ու վիճարանութեան ընթացքին էր որ «յանկարձ պալատական թիկնապահ մը կը հասնի ձիով եւ իր ձեռքին ունեցած կանաչ սնդուսի մէջ դրուած իրատէն»⁽²⁰⁸⁾ Բ[արձրագոյն] Դրան հսկող հազարապետին կու տայ ըսելով:

«— Չարնելու հրամանն է:

«Թիկնապահ Սերվէթ պէյ երբ իր խօսքը կ'ըսէ՝ հոն գտնուող 18-19 տարեկան զաւառացի հայ մը իր ձեռքն ունեցած ատրճանակով մը Սերվէթ պէյը ձիէն վար կը բերէ եւ [անոր] մահը վայրկենական կ'ըլլայ:

«Ահա այդ ատեն ճակատամարտը կ'սկսի հայերու, ոստիկաններու եւ զօրքերու միջեւ: Չաթալխանէն ալ կը հասնին 500-ի շափ հայեր, ինչպէս նաեւ սոփրաներ»⁽²¹⁰⁾, եւ կռիւր կը սաստկանայ:

«Մէկ ժամէն աւելի Պոլիս, Բերա եւ Ղալաթի[ա] տակն [ու] վրայ կ'ըլլան: Բ[արձրագոյն] Դրան պաշտօնեաները ինքզինքնին կամուրջ ձգելով՝ շոգենաւ կը նստին ու կը փախչին»⁽²¹¹⁾:

ձանկիւլեան վիպապաշտ է շատ եւ խանդավառ՝ եղածով: Կը բաւէ որ «զաւառացի հայ մը» ձիէն դիտապաստ վար բերէ Թուրք սպայ մը: Չորմիսեանն աւելի է հանդարտ, եւ, առ այդ՝ կու տայ լոկ թուումն մասանցը դէպքերուն: Ըստ անոր՝ «հայ երիտասարդ մը՝ Աբրահամ անունով, ատրճանակի հարուածով մը անշունչ գետին կը փռէ թիկնապահը: Ոստիկաններու հակահարուածը չ'ուշանար»⁽²¹²⁾:

Իրաւ ալ՝ չուշացաւ հակահարուածը: Ժամանակակից եւ ականատես վկայի մը տուեալներով՝ «հեծեալ ժամտարմաներ կը հասնին եւ կը յաջողին ժողովուրդն ցրուել եւ հալածել, որոց կ'աջակցին եւ սոփրաներն: Հալածեալներու հետ անգթօրէն կը վարուէին, [եւ] սաստիկ կերպով կը ծեծէին: այսպէս՝ հայոց կողմանէ աւելի քան 100 անձինք մեռան եւ վիրաւորուեցան, եւ շուրջ 500-ներ բանտարկուեցան: Թուրք խուժանն ալ կը հետեւէր հայոց եւ շատ անգամ անմեղ եւ հանդարտ անձանց: Հալածանքէն փախողներու բազմութիւն մը, շուրջ 2000 [հոգի], ապաստանեցաւ Մայր Եկեղեցին, որոց հազարն հազիւ Պատրիարք Հայրն յաջողեցաւ ցրուել, մնացեալք անդ զիչերեցին, եւ զիչերայն ամէնն հաղորդուեցան:

«Գիշերն Պոլսոյ ամէն կողմերն եւ ժամանորապէս Ստամպուլի կողմն թուրք խուժանն, պաշի-պոզուֆներն⁽²¹³⁾, սոփրաներն հայոց վրայ յարձակելով զայնս կը զանակոծէին ու կը սպաննէին: Շարունակ լուր կը հասնի ոստիկանութեան նախարարէն թէ թրքաց զրգուման առաջին առնելու համար Մայր Եկեղեցին պարպելու է»⁽²¹⁴⁾:

Ըստ լոնտոնեան Տէյլի նիուզի մէկ վկայութեան՝ երբոր հայերը հասան արքունիք՝ ոստիկանական խումբի մը գլուխը կեցող Սերվէթ պէյը հրամայեց անոնց ցրուիլ եւ իրեն տալ թուրք վարչապետին յանձնելի աղերսագիրը: Անոնց բողոքին դէմ Սերվէթ նախտեց զանոնք եւ «անհաւատ շուն» կոչեց⁽²¹⁵⁾: Նոյնհետայն արձակուեցան գնդակներն ու Սերվէթ պէյ ինկաւ դետին: Ոստիկաններն անմիջապէս կրակեցին ժողովուրդին վրայ՝ երբ քանի մը հեծեալ ոստիկաններ վիրաւորուեցան: Հայեր կոուեցան կատաղի՝ սակայն ծայրաստիճան խառնակ կերպով, եւ ցուցարարները ցրուեցան երբ ոստիկանական նորանոր խումբեր հասան օգնութեան: Բազմաթիւ հայեր ինկած էին մեռած, մնացեալներէն ոմանք ձերբակալուելով՝ զանակոծուեցան խիստ կերպով, եւ ապա կապուած՝ լեցուեցան կառքերն ու տարուեցան բանտ: Խառնակութիւնները շարունակուեցան քաղաքին այլ կողմերն ալ՝ ամբողջ օրուան ընթացքին, երբ սոփրաներու ամբոխ մը, մահակներով զինուած, երեկոյեան խոնուեցաւ հրապարակ մը եւ սպառնաց ջարդել հայերը, սակայն ոստիկանութիւնն անմիջապէս ցրուեց զայն»⁽²¹⁶⁾:

Ինչպէրուն ժամանակակից եւ ականատես Խաչ-Պապեանը բաւական մանրամասնութեամբ կու տայ թաւալքը յետսերվէթեան սպանութեան: Ըստ անոր «Պապը Ալիէն եւ ձօտակայ փողոցներէն անցնող հայերուն վրան կը խուզարկուի: Շատերու [ն] վրայ զէնքեր կը գտնուին: Աւելորդ է նկարագրել թիւրք ամբոխին եւ ոստիկաններուն կատաղութիւնը եւ մոլեգնութիւնը: Սարսափ՝ ամէն կողմ. խանութները կը փակուին անմիջապէս: Տաճիկ պաշտօնեաները Բիր-Բիր կը դողան:

«Տաճիկ խուժանը կը սկսի իր կատաղութիւնը թափել անցնող [եւ] դարձող հայերուն վրայ, որոնց վրայ եղած միակ ամբաստանութիւնը [անոնց] հայ ըլլալն է: Երբ հայ մը միջամտէ եւ պաշտպանելու գէ՛ ինքն ալ առարկայ կ'ըլլայ նոյն բարբարիկ զանակոծութեան: Այս տեղատարափ ձեռնին տակ մարդ խելակորոյս կ'ըլլայ, եթէ սակայն չմեռնի, ու այդ վիճակին մէջ կը քաշկուտուի դէպի բանտ:

«... Ձերբակալութիւնները մէկ կողմէն, խժոժութիւնները միւս կողմէն կը շարունակուին փութաջանութեամբ: Փողոցներէն, կամուրջէն անցնող [ու] դարձող հայերու [ն] վրայ խուզարկութիւն-

ներ կ'ըլլան, եւ պզտիկ թուղթ մը գտնւածին պէս՝ կը ձերբակալւին. իսկ անոնք որ կասկածելի կը թւին՝ անմիջապէս կը ձերբակալւին:

«Բեռնակիրներ խուճր-խուճր բանտ կը տարւին, որովհետեւ [խօսք] տարածւեցաւ տաճիկ շրջանակներու մէջ թէ Հայերու բեռնակիր եւ հրէջ զասակարգն է որ այս խռովութիւնը հանած է:

«Գիշերը սոփքաները զինւած՝ կը յարձակին Քահթէ-Գալէի, կետիկ Փաշայի, [եւ] Գուճ Գափուի կողմերը: Բաւական մեծ կոտորած եւ ձերբակալութիւններ [կատարուեցան]: Սոփքաները իրենց բռնածը կը ձեռնն եւ յետոյ կը յանձնեն ոստիկաններուն, որ, առանց հարցաքննելու, զանի կ'առաջնորդեն բանտ...»⁽²¹⁷⁾:

Բանի մը օր ետք Մուրնին յղուած այլ նամակով մը Սաշ-Պապեան պիտի գրէր տակաւին, թէ «իրրեւ թէ Պուլսի սոփքաները չբաւէին Հայերէն վրէժ առնելու ու Հայերուն պատուհաս ըլլալու համար. տաճիկ նաւավարներ, բեռնակիրներ, ջրհանկիրներ, սոփքայի տարազով, բացարձակապէս արտօնութիւն կը ստանան գեաւուրները ջնջելու. ամէն տեղ թիւրք ժողովուրդը իրենց հետ եղան, զաւազանով, հովանոցով, քարով, [եւ] փայտով իջեցուցին [իրենց] ձեռք անցուցած հայուն գլխուն: Պատեհ առիթ գտան իրենց վրէժը լուծելու թիւրքերէն»⁽²¹⁸⁾ ամէն անոնք որ այս կամ այն պատճառով Հայերուն [եւ] հետ ոխեր ունէին: Ոխ ունեցողը հաւատացուց մոլեգնած սոփքաներուն, որ այս ինչ հայր յեղափոխական է. ու ահա խառնիճաղանճ բազմութիւնը իր կատաղութիւնը կը թափէ խեղճ հայուն վրայ, եւ անոր ունեցածները իբր կողոպուտ իրենց մէջ կը բաժնեն: Թիւրքարնակ թաղերու մէջ գտնուող բոլոր Հայ խանութպանները տուժեցին, քանիներ իրենց անձը վրայ տալով եւ շատեր [ալ] իրենց ունեցած ապրանքները»⁽²¹⁹⁾:

Թուրք ժամանակագիր Իսմայիլ Համի Տանիշմենտ, սակայն, հիմնովին շրջուած կը ներկայացնէ այս բոլորը: Ան ալ կրկնելէ ետք Էօզթունայի եւ Արըփընարի հետ թէ Հայոց Պատրիարք Իզմիրլեանն էր որ ոտքի հանեց պոլսահայութիւնը՝ կը գրէ տակաւին թէ «հռչակաւոր յեղափոխական Իզմիրլեան Պատրիարքի առաջնորդութեամբ՝ հայեր շարժեցան դէպի Բարձրագոյն Դուռ: Թէպէտեւ կուսակցականներուն եռանդուն եւ անսահման պահանջներով եւ անբեւեակայելի երազներով ոտքի հանուած անզգոյշ ըմբոստները յառաջացան Գատրկայի նաւահանգիստէն»⁽²²⁰⁾ դէպի Սուլթան Ահմետի հրապարակն ու դամբարանը՝ [սակայն] չկարողացան դէպի Բարձրագոյն Դուռ տանող թիւր անցնիլ Պարսկական Դեսպանատունէն անդին:

«Թէպէտեւ Բարձրագոյն Դուռի պաշտպանութեան համար ոստիկանութեան նախարարութեան ուժերը բաւարար չնկատելով՝ վարչապետ Սայիտ փաշան գումարտակ մը զինուոր էր պահանջեր Զին-

ուորական Ընդհանուր Հրամանատարէն՝ Սուլթան Համիտ չէ արտոնած այսպիսի կարգադրութիւն մը՝ խորհելով որ անիկա կրնար գործը քննադատելու միջոց մը հայթայթել Եւրոպային եւ արտօնած է որ լո՛կ ոստիկան-զինուորներ հսկողութիւն կատարելու պէս շրջագային փողոցներուն մէջ:

«Դէպքին այս առաջին օրը 50 մահ է եղած հայերուն կորուստը, իսկ ոստիկանութենէն նահատակուած է միայն Սերվէթ էֆէնտի անունով ոստիկանապետ մը: Ըմբոստները պոռչտալէն զատ բան չեն կրցած ընել: Առ այդ՝ մէկ կողմէն Պատրիարքին կը զրկուին ազդու ազդարարագիրեր, եւ միւս կողմէն ալ՝ երբ կը ճնշուին ըմբոստները՝ բազմաթիւներ հետապնդուած են զեկալարներէն եւ յանցաւորներէն: Կ'ըստի նաեւ թէ հայերն աւելի չեն կրցած յառաջանալ [թուրք] ժողովուրդին, զինուորներուն եւ ոստիկան-զինուորներուն ընձեռած աջակցութեան եւ մանաւանդ կրօնական ուսանողներուն եւ արհեստաւորական դասերուն միջամտութեան շնորհիւ: Սակայն ցերեկն այսպէս անցնելէն ետք՝ զիշերը պատահեր են շատ աւելի արիւնոտ դէպքեր: Պսլխէն զատ Կալաթայի, Թոփսանէի, Թերսանէի եւ Գատըքէօյի կողմերը այն բախումները որոնք յառաջացած են հայերուն մահամտականներուն վրայ կատարած յարձակումներէն՝ տեւած են ժամերով»⁽²²¹⁾:

Թէ ինչո՞ւ եւ ի՞նչպէս՝ ասո՛նք են որ չեն տրուիր Տանիշմենտի եւ միւսներուն կողմէ, մինչդեռ հեղ մը որ սոփքաներն իջան հրապարակ՝ նկարագիր փոխեց ամէն ինչ: «Պոլսի մէջ»՝ կը գրէ ժամանակակիցը դէպքերուն՝ «հայերուն կողմէ այս յանդուգն ցոյցին լուրը կը պատի ամէն տեղ, ու թիւրք սոփքաները կ'իյնան փողոցները վրիժառութեան համար: Դէմերնին ելած հայերը կը զարնեն, կը ձգեն, կը նախատեն, մասնաւորապէս բեռնակիր դասակարգը կը տուժէ հայերէն: Սոփթա մը փողոցէն անցնող հայու մը նախատական խօսքեր կ'ուղղէ. ու անդիէն տաճիկ ածխավաճառ մը իր երկար»⁽²²²⁾ թիովը կը նետուի եւ հարւածով մը խեղճ մարդուն գլուխը կը ջախջախէ: Եւ ասանկ անգութ [եւ] անխնայ հարւածներ ամէն տեղ»⁽²²³⁾: Բանի մը օր ետք նոյն ականատեսը պիտի գրէ տակաւին, թէ «ասոնք Պոլսի կողմը, ուր եւրոպացիներ չկան — անգթարար, [եւ] գազանարար ձեռքերնին անցած հայերը փողոցներէն կը քաշկռտեն, սուրի հարւածներ տալով [անոնց] մարմնին ամէն տեղերուն: [Հայերէն] շատերը մեռած ու շատերն ալ կ'իսամեռ վիճակի մէջ են: Բնաւ սոփքաներէն չեն տարբերիր զինուորները. բայց պետական օրէնքները սանձ մը կը դնեն իրենց անսանձ կատաղութեան:

«Ոստիկան-գինուորները բանտին մէջ իրենց սուրերովը շարաշար կը ձեծեն շատ մը ձերբակալուած հայերու գլուխները: Այս խեղճերը մեռած են:

«Բանտին մէջ վիրաւորուած ու մեռած իրարու վրայ դիզած են այդ օրը. քանի մը լեռնայիներու պաշտօն յանձնուած է եղեր ներս տարւածները շարաշար ձեծել⁽²²⁴⁾. շատեր ահագին վէրքեր կը ստանան այս անխնայ հարւածներէն ու շատերն ալ կը մեռնին սոսկալի մահով մը: Մեռելներուն դիակները ծովին յատակը իջեցուցած են սկիզբի օրը:

«Ականատես մը կը նկարագրէ բոլոր այս սպանութիւններն ու ձեծերը, ու կ'ըսէ թէ իր 15 ընկերները շարաշար ձեծելով՝ կը ջախջախեն բոլորի՛ն ալ գլուխները՝ ուղեղները դուրս թափելով: Բանտին մէջի մեռելներուն արիւնը ծածկելու համար 7 սայլ կիր տարւած է բանտը»⁽²²⁵⁾:

Այսպէ՛ս ուրեմն: Եւ տակաւին հաւատալ, եւ ամբողջ աշխարհին հաւատացնել փորձել, թէ հայե՛ր էին, որ յարձակեցան եւ սպաննեցին, իսկ թուրք խուժանը, կրօնական ուսանողութիւնը⁽²²⁶⁾, ոստիկանութիւնը, ոստիկան-գինուորութիւնը, զօրքը եւ արհեստաւորական դասակարգը՝ ո՛չ: Իրականութեան մէջ՝ ճի՛շտ հակառակն էր իրաւ եւ իշխանութիւնները ամէն ինչ կ'ընէին ճգմելու եւ տրորելու հայութեան հետ անոր հոգ հայրենին նաեւ: «Յանդիմանում, անարգում է մարտիրոս ժողովուրդը, արեան [եւ] արտասուքի մէջ խեղդուող, մերկ, սոված, տնից եւ ընչից, պատից, ընտանիքից զրկուած ժողովուրդը»՝ պիտի հաստատէր Դրօշակն այդ օրերուն, «որովհետեւ ուղեցւել է «հանդիսաւոր կերպով բողոքել» մեծ վեզիրի [ն], ընփոքմաների համար պետիցիա⁽²²⁷⁾ ներկայացնելով, որովհետեւ այս հանգամանքը յաջող առաջին առիթն է տւել սուլթանական կառավարութեան իր մազձը թափելու հայ ժողովրդի վրայ: Նա հրացանի առաջին հարուածով սկսեց մեծ վեզիրին դիմողներից եւ աւելի լայն բնաւորութիւն տալով, տարածեց կոտորածը բոլոր հայաբնակ թաղերը՝ հայ ժողովրդին սուրի բռնելով»⁽²²⁸⁾: Հակառակ սա ճշմարտութեան, սակայն, Պոլսոյ օտար ղեսպանութիւններուն զրկուած 8 Հոկտեմբեր 1895 թուակիր իր պաշտօնագիր-շրջաբերականով՝ Օսմանեան կայսրութեան արտաքին գործերու նախարար թուրքսան փաշան պիտի պնդէր, թէ «այս դէպքերու առաջին օրէն ի վեր մահմետականները որեւէ բրտութիւն չեն կատարած հայերուն հանդէպ... Երկուշաբթի, շարժումին սկսած օրը, զինեալ հայեր հրապարակ իջան զանդուածային կերպով եւ սկսան ցոյցի՝ սպաննելով եւ վիրաւորելով ոստիկան-գինուորներու հրամանատար մը եւ այն մահմետականները որոնց հանդիպեցան: Ես հրուելով ոստիկաններուն կողմէ՛, ցրուե-

ցան անոնք՝ սակայն վերստին հաւաքուելու համար այլ տեղեր, ուր կրկին յարձակեցան [Թուրք] ժողովուրդին վրայ: Ըմբոստները շատ աւելի մեծաթիւ ըլլալով ներկայ ոստիկաններէն եւ ոստիկան-զինուորներէն՝ մահմետականներն ստիպուած եղան պաշտպանել իրենք զիրենք:

«Բորբոքումի այսպիսի պահու մը կրնայ պատահիլ որ տեղի ունեցան փոխվրէժներ...: Գալով այն յարձակումներուն որոնք կատարուած են այլ համայնքներու պատկանող քրիստոնեաներու վրայ՝ հաստատուած է որ անոնք հայերուն իսկ կատարածներն են»⁽²²⁹⁾:

Ահա՛ւասիկ թրքական կողմը ճշմարտութեան: Այսուհանդերձ՝ աւելի՛ ամբողջական եւ յստակ ընծայելու համար պատկերն այս «ճշմարտութեան»՝ հոս անհրաժեշտ է տալ դրեթէ ամբողջական մէկ թարգմանութիւնը ոստիկանութեան նախարար Հիւսէին Նազըմ փաշայի 10 Հոկտեմբեր 1895 թուակիր տեղեկագիրին՝ լոյսին բերելու համար խեղաթիւրումն ու նենգափոխումը իրականութիւններուն եւ յստակ ու շօշափելի ընծայելու համար ակն ու աղբիւրը բոլոր Տանիշմենտներուն, Ուրասներուն, Կիւրիւններուն եւ մնացեալ թուրք «պատմարան»ներուն գիտակութեան: «18 Սեպտեմբեր 1311-ի»⁽²³⁰⁾ երկուշարթի օրը կուսակցական առաջնորդներ եւ հազարէ աւելի հայեր հաւաքուեցան Պատրիարքարանի եկեղեցիին մէջ՝ կը գրէ Նազըմ փաշան, եւ կը շարունակէ ապա թէ «ինչպէս որ որոշած էին նախօրօք՝ Պոլսոյ մէջ հոս ու հոն թաքնուած զինեալ հայեր հրապարակ իջան յեղակարծ կերպով [եւ] «կեցցե՛ն, կեցցե՛ն բանուորները» սկըսան պոռալ: Երբ մէկ կողմէ կը կրակէին իրենց ձեռքի զէնքերով՝ միւս կողմէն ալ կը փորձէին իրենց գոռում-գոչումներով վախ ու սարսափ տարածել շրջակայքին վրայ: Չտարածելու համար դէպքը՝ անոնց դէմ ելլող ոստիկանական ուժեր հրաժարեցան զէնք գործածելէ, [եւ] ուղեցին դէպքը մարել «մի՛ կատարէք, մի՛ ընէք»ի նման խօսքերով: Եփացած հայեր հաւաքուեր էին Նուրը Սամանիէ եւ Թաւուզ Փազարը: Հոս՝ ոստիկանութեան մեղմ կեցուածքին պատճառով աւելի յառաջ տանելով գործը՝ հայերն աւելի՛ եւս բազմապատկեցին զէնքի ձայները եւ գոռում-գոչումները: Երբ ոստիկանութիւնը վերահասու դարձաւ թէ մեղմութիւնն աւելի՛ եւս կը բորբոքէր հայերը՝ ստիպուած եղաւ զէնք գործածելու, սակայն լրիւ չբռնկեցնելու համար պատահարը՝ մեծապէս զգուշացաւ արիւնահեղութենէ: Թէպէտեւ ոստիկանութիւնը ճիւղորդ ոստիկան-զինուորներ զրկեց ցրուելու համար հայկական այս խելազար ամբոխը՝ [սակայն] մէկ կողմէ կրակ բանալով իրենց ասրճանակներէն [եւ] ցոյց տալով իրենց դաշոյնները եւ դանակները՝ [հայերն] սկսան քովնափ փոզոցներէն քալել դէպի Բարձրագոյն Դուռ:

«Այս կացութիւնը մահմետականներուն առթեց շփոթ, յուզում եւ ապշանք: Գոռում-գոշումներով հայերը հասան Թիւրպէէն⁽²³¹⁾ դէպի Բարձրագոյն Դուռ բաժնուող ճամբուն միացման կէտը: Հոս՝ երբ մահմետական ժողովուրդի աչքին առջեւ վայրագօրէն բզկտելով նահատակեցին ոստիկան-զինուորներու հազարապետ Սերվէթ պէյը՝ «Զեր բոլորն ալ ոտքի տակ առնելով ոչնչացնելու օրն ա՛յս օրն է» խօսքը ուղղեցին մահմետականներուն [եւ] յարձակեցան տեղուոյն վրայ գտնուող ոստիկաններուն, ոստիկան-զինուորներուն եւ մահմետական ժողովուրդին վրայ: Նահատակեցին քանի մը հոգի եւս: Հայերու այս սանձարձակ յարձակումին դէմ՝ ոստիկանութիւնն ստիպուեցաւ զէնքի դիմելու: Ոստիկանութեան այս կարծր եւ խիստ շարժումին դէմ՝ հայերը փախուստի դիմեցին: Հոս բաժնուեցան քանի մը թեւի:

«Սոսովութիւնը տարածելու համար Պոլսոյ բոլոր կողմերը՝ հայերը յարձակեցան մզկիթներու, դպրոցներու [եւ] մետրեսէններու⁽²³²⁾ առջեւ [գտնուող] խոհանարաններուն⁽²³³⁾, կրօնականներուն եւ ուսանողութեան⁽²³⁴⁾ վրայ: Այս միջոցին վիրաւորեցին ուսանող Բեսուլ էֆէնտին ալ, որ կը գտնուէր Տիրուզ Աղա մզկիթին մէջ սպասարկողներու խցիկէն ներս: Հոս խմբուած հայերուն մէկ մասը շրջակայքի մահմետականներուն վրայ եւ միւս մասն ալ մահմետական թաղերը ցրուելով՝ կրակեցին իրենց ատրճանակներով [եւ] փորձեցին վախ ու սարսափ ազդել Պոլսոյ ժողովուրդին վրայ:

«Ըստ [նախապէս կայացած] որոշումի՝ հայերը հրացանածր-գութիւն ըրին եւ գոռում-գոշում ստեղծեցին Պատրիարքարանի եկեղեցիին, Գարակէօմրիւքի հայկական եկեղեցիին, Էյուպի կղմինարի աշխատանոցին, Պէյօղլուի Պալլըգ Փազարըին, Գասըմ Փաշայի եւ բազմաթիւ այլ վայրերու մէջ: Բոլոր գիշերը շարունակուող այս անկարգութիւնը մտահոգեց մահմետականները [եւ] գանոնք ձգեց կեանքի ու գոյքի [պաշտպանութեան] տազնապին մէջ: Այս աղմարարութեան որպէս հետեանք՝ դէպքեր պատահեցան Պէյօղլուի, Պալլըգ Փազարըի, Կալաթայի, Հաթիպ Գափրի, Գասըմ Փաշայի, Էյուպի, Գարակէօմրիւքի, Չուզուր Չեչմէի, եւ բազմաթիւ այլ վայրերու մէջ, եւ վիրաւորներ ինկան ոստիկաններէն, ոստիկան-զինուորներէն, մահմետականներէն, ոչ-մահմետական ժողովուրդէն եւ հայերէն:

«Ոստիկանական ուժերու ջանքին շնորհիւ հայերուն մէկ մասը կրկին հաւաքուեցաւ Պատրիարքարանի եկեղեցիին մէջ [Նուրը] Օսմանիէէն, Թաուզ Փազարէն եւ Թիւրպէէն, իսկ մնացեալները ցրուեցան մահմետական թաղերէն ներս եւ իրենց զէնքերով յարձակումի անցան հոս ու հոն:

«Երբ զգացուեցաւ, որ յեղափոխականները⁽²³⁵⁾ պիտի դիմէին աւելի մեծ շարիքներու՝ յիշեալ օրը գացի Պատրիարքարան տեսակ-

ցելու համար Պատրիարքին հետ: Երբ հիւանդութիւն պատրուակելով մերժեց զիս ընդունիլ՝ առաջարկեցի [անոր] զրկել մէկական գիտակ մարդ կրօնական եւ Քաղաքական ժողովներու անդամներէն: Իմ Բարձրապատուութեանս ներկայացած երկու անձերուն խորհուրդ տուի, որ Պատրիարք էֆենտին ցրուէր եկեղեցիին մէջ ժողով գումարող օրինադանցները: Մինչեւ երեկոյ անկարելի եղաւ իրականացնել յաջողութիւնն այս փափաքին: Այսպիսով՝ յիշեալ եկեղեցիին ժողովուրդին վատ լուրերուն շարունակականութեան դէմ սպասեցի երեքէն չորս ժամ որ շարժէր Պատրիարքը: Երբ կրկին կարելի չեղաւ հասնիլ որեւէ արդիւնքի՝ գիշերը կրկին գացի Պատրիարքարան եւ հանդիպելով Պատրիարքին՝ բացատրեցի անոր խորքն այս կացութեան եւ անկէ պահանջեցի ցրուել ժողովուրդը, [եւ] զօրաւոր սպահովութիւն տուի անոր, որ [ցրուելու] հրահանգին անսացող անհատներուն դէմ պիտի ձեռնարկուէր ոստիկանական ոչ մէկ միջոցառում: Այսուհանդերձ՝ մեկնեցայ ոստիկանական կեդրոն՝ հազորդելով անոր որ Պատրիարք էֆենտին՝ որուն համաձայն յեղափոխականները չէին անսար իր խօսքին լուր զրկէր եւ յորդորէր յեղափոխականները որ ցրուէին: Այդ գիշեր մինչեւ ժամը հինգ⁽²³⁶⁾ սպասեցի անոնց ցրուումին, [եւ] երբ տեսնուեցաւ որ ժողովուրդը կը շարունակէր մնալ հոն՝ պաշտօնական ծանուցագիր մը զրկելով Պատրիարքին՝ կտրուկ կերպով պահանջեցի անկէ առանց այլեւայլի ցրուումը ժողովուրդին»⁽²³⁷⁾:

Իրա՛ւ էր նազըմ փաշան. անիկա պահանջեց, եւ այդ մէկը՝ կտրուկ կերպով, ցրուումը հայ ժողովուրդին, որ «ահագին բազմութեամբ» լեցուեւր էր Գում Գափուի, Բերայի եւ Ղալաթիոյ եկեղեցիները: Սակայն, ինչպէս կը գրէ հնչակեան հեղինակութիւն մը, «քիչ վերջը սուլթանական թիկնապահը կու գայ եւ Սուլթանի իրաւունք կը հազորդէ Իզմիրլեանին որպէսզի ժողովուրդը ցրուէ: Իզմիրլեանին քարտուղարը նոյնը կը պատասխանէ թիկնապահին՝ ինչ որ պատասխանած էր Եպարքոսի պաշտօնագրին՝ թէ ինքը անկարող է ժողովուրդը համոզել եւ ցրուել կամ ապաստանարանէն դուրս հանել: Այս պատճառաւ գիշերը նազըմը երկու անգամ Պատրիարքարան կ'երթայ Իզմիրլեանը համոզելու, նորէն ի գուր: Կէս գիշերին բոլոր նախարարները պալատին մէջ ժողով կ'ընեն, եւ Երեքշարթի ալ ղեսպանները ժողով կ'ընեն Թերապիա»⁽²³⁸⁾, «Աւստրիական Դեսպանատան մէջ՝ խորհրդակցելու համար կացութեան մասին»⁽²³⁹⁾: Իրականութեան մէջ՝ սա վերջին պաշտօնագիրն ստորագրեւր էին Մեծ Վեզիրը, շէյխ իւլ-խւլամը եւ արտաքին ու ներքին գործերու նախարարները⁽²⁴⁰⁾:

Հետաքրքրական է, ամէ՛ն ինչ հետաքրքրական է: Ծանկիւլեան կ'ուզէ որ Պատրիարքարան ներկայանայ «սուլթանական թիկնապա-

հը», կ'ուզէ նաեւ որ անիկա խօսի Իգիմիրլեանի «քարտուղարին» հետ: Մենք վստա՛հ ենք, որ Ճանկիւլեան գիտէր կարգն ու կանոնը Օսմանի աշխարհին, ուր սուլթանը իր թիկնապահին միջոցով կը յարաբերէր լո՛կ իր կառավարութեան անհատներուն հետ: Պատրիարքին եւ Սուլթանին միջեւ կապը մեծ վեզիրն էր միայն, ու եթէ Պատրիարք ու Սուլթան տեսակցէին երբեք՝ այդ կրնար պատահիլ որոշ առիթներով եւ մեծ վեզիրին միջոցով: Միւս կողմէ՝ սասիկանութեան նախարար Հիւսէին նազրմ Փաշան ալ կը նմանէր Ճանկիւլեանին՝ իր անհակակշիռ դիրքով: Ըստ անոր՝ թո՛ւրքն էր զոհը, եւ հայը՝ կարմիր դագան մը լոկ, անուպայ, բիրտ եւ վայրագ: Չայն ներկայացնել այսպէս՝ պարտ էր ու պատշաճ, եւ հայուն տրուած նկարագիրի այս գիծերով՝ զայն նախաշարձակ ընծայելէ ետք՝ ա՛լ դիւրին էր ներկայացնել ընթացքը դէպքերուն, միայն թէ, հակառակ արեւմտեան Մեծ Պետութիւններու հակասութիւններուն եւ հակամարտութիւններուն՝ անոնց դեսպանական ներկայացուցիչներուն մէջ կային մարդեր, պաշտօնական կամ ոչ, որոնք պատրաստ էին ներկայացնելու դէպքերն այնպէս՝ ինչպէս որ էին անոնք իրաւամբ: Գուցէ այդ վերջիններէն էր Միացեալ Նահանգներու պետական քարտուղար Ռիչըրտ Օլնին, որ ամերիկեան Մերակոյտի պահանջին վրայ՝ 19 Դեկտեմբեր 1895-ին կարգաց տեղեկագիր մը, որով ի միջի այլոց հաղորդեց իր ունկնդիրներուն, թէ «30 Սեպտեմբերին լուրջ խռովութիւններ ծագեցան Պոլսոյ մէջ իսկ: Քանի մը հարիւր հայեր, որոնք հաւաքուեր էին խմբովին երթալու համար Սուլթանին պալատը եւ դարման մը խնդրելու իրենց ազգակիցներուն տառապանքներուն համար՝ ցրուելեցան սասիկանութեան կողմէ ուժգին բախումէ մը ետք, որուն ընթացքին մեռան եւ վիրաւորուեցան որոշ թիւով հայեր եւ թուրքեր: Յաջորդեց ամբոխին բռնութիւնը եւ մայրաքաղաքին զանազան շրջաններուն մէջ հայ բնակչութիւնը յարձակումի ենթարկուեցաւ զրգուած թուրք ամբոխին կողմէ: Սպաննուեցան 50-է աւելի [հայեր]: Խռովութիւնները շարունակուեցան յաջորդ օրն ալ, Հոկտեմբեր 1-ին, Պոլսոյ մէջ եւ անոր արուարձաններուն: Մօտ 800 կամ 1000 հայեր բռնուեցան կամ ձերբակալուեցան, որոնցմէ շատեր զինուած էին նոյնատեսակ նորատրձանակներով: Կարգն ու կանոնը հաստատուեցան երրորդ օրը, եւ այն հայերը, որոնք ապաստաներ էին իրենց եկեղեցիները՝ վերագարձան իրենց տուները»⁽²⁴¹⁾:

Վերադարձա՞ն՝ հարց էր այս մէկը սակայն: Օլնին նստած հեռուոր Ուաշինկթընի մէջ եւ յենելով լո՛կ Պոլսոյ իր դեսպանին՝ Թերէլին հայթայթած տեղեկութիւններուն եւ Ուաշինկթընի Օսմանեան Կայսրութեան դեսպանին տուած պաշտօնագիրներուն եւ տեղեկագիրներուն՝ չէ՛ր իսկ կրնար գիտնալ, թէ ինչե՛ր կը պատահէին Վոսփորի

ափերուն վրայ: Ահա թէ ինչն^օւ համար ղէպքերէն մօտ երկուքուկէս
ամիս ետք՝ անիկա աւարտած կը յայտարարէր ամէն ինչ: Սակայն Օս-
մանեան Կայսրութեան արտաքին գործերու նախարար Թուրխան փա-
շան 30 Սեպտեմբերի՝ն իսկ ամէն ինչ աւարտած եւ կեանքն իր նախ-
կին ու բնականոն հունին վերադարձած կը նկատէր ու կը յայտարա-
րէր զայն: Ըստ նոյն թուականի պաշտօնագիրի մը՝ անիկա փութա-
ցեր էր արդէն իմաց տալու արեւմտեան երկիրներու Պոլսոյ ղեսպան-
ներուն, թէ «կարգ մը հայ խոռվարարներու դրդումով հայերը հա-
մախմբուեցան Հայոց Պատրիարքարանին առջեւ եւ շուրջ: Ձեռք առ-
նուած անհրաժեշտ միջոցառումներու շնորհիւ՝ անդորրը կը տիրէ
քաղաքին մէջ»⁽²⁴²⁾: Յաջորդ օրը՝ Հոկտեմբեր 1-ին կատարուած պե-
տական պաշտօնական յայտարարութիւն մը կ'ըսէր սակայն, թէ «կը
յայտարարուի թէ երբ հայերու բեռնակիր եւ հրչէջ դասէն կարգ մը
անհատներու հոս ու հոն խմբուիլը տեսնուեցաւ՝ ոստիկաններու եւ
ոստիկան-գինուորներու միջոցով եւ Պատրիարքարանին կատարուած
ազդարարութեան եւ յորդորներու վրայ՝ խմբաւորումները ցրուե-
ցան, եւ նորին Կայսրութիւն Թագաւորին շնորհիւ հաստատուած
են ապահովութիւնն ու անդորրը»⁽²⁴³⁾: Այս յայտարարութեան հե-
տեւեցաւ երկրորդ մը⁽²⁴⁴⁾, որ կը հաղորդէր, թէ «այսօրուան թեր-
թերուն մէջ յայտարարուեցաւ թէ ի^օնչպէս ցրուեցան կարգ մը հայեր,
որոնք համախմբուեցին: Այս խումբէն ձերբակալուեցան անոնք ո-
րոնք զէնքով ընդդիմացան ոստիկան-գինուորներուն եւ ոստիկաննե-
րուն: Բնական է որ օրինական պատիժ տնօրինուի անոնց:

«[Այսու] կը յայտարարուի, թէ Կայսրութեան մահմետական
եւ ոչ-մահմետական քաղաքացիներէն իւրաքանչիւր դասակարգ եւ
անհատ անհրաժեշտ է որ շարժի քաղաքացիական պարտաւորու-
թեամբ: Ընդդիմացողները իրենք են պատասխանատու: Անոնց պիտի
տնօրինուի օրինական խստագոյն պատիժը»⁽²⁴⁵⁾:

Սակայն, հոս, ճի՛շդ հոս ալ անհրաժեշտ է տալ փոքր հատուած
մը Ապտիւլ Համիտի վստահելիներէն իսմայիլ Քեմալ պէյի, որ բա-
ւական մօտէն ծանօթ էր պալատի ներքին ծրագիրներուն: Ըստ անոր՝
«երբ Դուռն իմացաւ անոնց՝ [հայերուն] մտադրութիւնը՝ [իւնչպէս
որ] անոր պարտականութիւններն եւ նոյնիսկ անոր պարտաւորութիւնը՝
լուր դրկեց անոնց ղեկավարներուն, պահանջել անոնցմէ որ այլ ձեւով
ներկայացնեն իրենց ուզածները, եւ արգիլել ցոյցը՝ ո՛չ միայն ոչինչ
ըրաւ այս ուղղութեամբ՝ այլ խթանեց զայն իր ընթացքով, յատկօրէն
ուզելով օգտուիլ անկէ, որպէսզի ձեռք առնէր ճնշիչ միջոցառումներ
ցուցարարներուն դէմ: Զինուորներ գետեղուեցան դիրքերու վրայ,
եւ բիրերով գինուած մարդեր դիրք բռնեցին անոնց ետին պահ մտած:
[Յոյցին յաջորդող խառնակութեան ընթացքին] յանկարծ պատահե-

ցաւ ամենէն վայրագ տեսակի յարձակում մը ինչպէս ցուցարար Հա-
յերուն՝ նոյնպէս ալ ընդհանրապէս [Հայ] ժողովուրդին վրայ: ...
[Ապա] նոյնանման Զարդեր տեղի ունեցան երկիրին մէջ եւ Փոքր
Ասիոյ [տարածքին]»⁽²⁴⁶⁾:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

112. Կիտուր, «Ցոյցերը», էջ 135-136:
113. Սկզբնաղբիւրներու հնչակեան գրականութիւնը զայն կը ճանչնայ նաեւ Վերին Մարմին եւ Վարիչ Մարմին անուններով:
114. Ըստ Վարդեանի՝ Պոլսոյ հնչակեան դեկավարութիւնն ունէր իրարմէ ան-
շատ երկու մարմին, Վերին Մարմինը՝ որուն անդամներն էին Լեւոն
Մկրտիչեանը, Սուրէն Սուրենեանը, փաստարան Գուրգէն Էֆենտին [Գուր-
գէն Հայկունի], Վահէ Արզուեանը եւ Արտաւազ Օհանջանեանը, որ կու-
սակցութեան կեդրոնի Պոլսոյ պաշտօնական ներկայացուցիչն էր: Վերին
Մարմինէն անկախ՝ կար Գործադիր Մարմինը, որուն անդամներն էին Մար-
գար Հացագործեանը, Արշաիր Կամարակեանը, Յակոբ Արծրունին, Վա-
հագն Յարութիւնեանը, Վահէ Արզուեանը, եւ Կարապետ Սահակեանը:
Միացեալ Նահանգներ հաստատուելէն ետք՝ Կարապետը պիտի ճանչցուէր
Հէվըրհիլի Կարօն անունով: Տես՝ Վարդեան, էջ 139:
115. Պիտի ըլլայ Ատովմ:
116. Շատ հաւանաբար բողոք-պահանջագիրքին օսմաներէն բարգմանութիւնը
կատարուեցաւ Լեւոն Մկրտիչեանի կողմէ, որ «չեզուագէտ»ն էր իր մտքին՝
ինչպէս կը յայտնէ Վարդեան:
117. Տեփոյեան, էջ 83:
118. Ընդգծումը Սահակեանինն է:
119. Հէվըրհիլի Կարօն, էջ 36-37:
120. Անգլիական դեսպանատան զոյգ մը բարգմանները, որոնք ցոյցի առաջին
խկ վայրկեանէն հոն էին արդէն: Ըստ գերմանական *Թակեպլաթ* բերքի
Պոլսոյ թղթակիցին 4 Հոկտեմբեր բուակիր մէկ հեռագիրին՝ «մինչ կոհուր
հայերուն եւ ոստիկանութեան միջեւ հասեր էր իր առաւելագոյնին՝ կառ-
ֆով մը փողոցներէն անցան Անգլիական Դեսպանատունէն երկու բարգման-
ներ: Ընդհանրապէս տեսնուեցաւ որ դէպքի մասին Անգլիական Դեսպանա-
տունն այդքան արագ տեղեկութիւն էր ստացեր՝ որքան ոստիկանութիւնը,
որ դէպքին վայրը հասաւ բարգմաններուն հետ միաժամանակ»: Տես՝ *The
Halifax Herald*, 5 October 1895, p. 4:
121. Հէվըրհիլի Կարօն, էջ 39:
122. Մով, «Նամակ Կ. Պոլսէ, 2 Հոկտեմբեր 1895», *Հայք*, Ե. տարի, թիւ 19
(106), Նիւ Եորք, 1 Նոյեմբեր 1895, էջ 271: Ասկէ ետք կը նշուի որպէս Մով,
«Նամակ, 2 Հոկտեմբեր 1895»:
123. Նոր տումարով՝ 30 Սեպտեմբեր:
124. Ընդգծումը Մուրճի թղթակիցինն է:
125. Խաչ-Պապեան, «Նամակ, 19 Սեպտ. 1895», էջ 1306:
126. *Affaires Arméniennes*, p. 139. տես նաեւ՝ Վարդեան, էջ 125:

127. «Correspondence», *Turkey*, 2 (1896), p. 32.
128. Վարդեան, էջ 134:
129. Hocaoglu, s. 218.
130. Նոյն, էջ 220:
131. Անգլիական արտաքին բաղաձայնությունների արձևչուող փաստաթուղթերի կազմում ավազանական հրատարակություն մը, որ մեր մէջ ծանօթ է նաև *Կապույտ Գիրք* յորոշրոմով:
132. Շահպագ, էջ 189:
133. Ըսել կ'ուզուի՝ անստորագիր:
134. *Papers*, 1896, p. 1318.
135. Ճանկիւլեան, Գ., էջ 176: Վերցնելով Պատրիարքին խօսքերը Ճանկիւլեանէն՝ Վարդեան կը կատարէ յաւելում մը անոնց վրայ եւ Պատրիարքին քերական կը դնէ «քերացած չեմ իմ պարտականութեանս մէջ» նախադասութիւնը: Տես՝ Վարդեան, էջ 126:
136. Մով, «Նամակ Կ. Պոլսէ, 24 Սեպտեմբեր 1895», *Հայք*, Ե. տարի, քիւ 18 (105), Նիւ Եորք, 15 Հոկտեմբեր 1895, էջ 254-255: Ասկէ ետք կը նշուի որպէս Մով, «Նամակ, 24 Սեպտեմբեր 1895»:
137. Այսինքն՝ խնդրագիրին:
138. Washburn, p. 238.2
139. Greene, p. 29.
140. Վարդեան, էջ 126-127:
141. *The Halifax Herald*, 5 October 1895, p. 1.
142. Hocaoglu, s. 218.
143. Esad Uras, *Tarihite Ermaniler ve Ermeni Meselesi*, Ankara, 1950, s. 485-486.
144. Նոյն, էջ 486:
145. Այսինքն՝ գաւառաբնակ հայերուն:
146. *Papers*, 1896, p. 1318.
147. «Ծօսք» բառով կ'ակնարկուի կատարելի ցոյցին:
148. Hocaoglu, s. 220.
149. Այնքան է սպագրական սխալը. պիտի ըլլար Սերվէր:
150. Kâmurân Gürün, *Le Dossier Arménien*, Paris, 1985, p. 184.
151. Օրմանեան, Գ., ս. 5041-5044: Բաղդատէ՝ Վրացեան, էջ 236-237. Hocaoglu, s. 180.
152. Ապտիւլ Համիտի յուշերուն կան խանի մը հրատարակութիւնները: Անոնցմէ առաջինը կու գայ 1913-էն՝ երբ տակաւին ողջ էր հեղինակն անոնց եւ հրատարակուեցաւ գերմանական *Նորա ունա Չուա* (Հիւսիս եւ Հարաւ) պարբերականին մէջ: Ասկէ՝ էր որ Թիֆլիսի մէջ Արշակ Ջամալեանը բարգաւանց որոշ հատուածներ եւ նոյն տարին իսկ յոյսին տուաւ *Հորիզոն*ին մէջ: Տասնամեակ մը ետք՝ բարգաւանելով *Նորա ունա Չուա*էն՝ Օսմանեան Պատմութեան Ընկերակցութիւնը պիտի հրատարակէր զայն ամբողջութեամբ: 1949-ին քրեական *Ենի Սապահ* օրաթերթը որոշեց վերհրատարակել Սուլթանին յուշերը որպէս թերթ-օմ, սակայն ակամայ կերպով կէս ձգեց սկսուած գործը ամէն կողմէ հասնող դիտողութիւններու եւ ղեկավարութիւններու պատճառով: *Ենի Սապահ*ի փորձէն մօտ քառորդ դար ետք էր որ Պոլսոյ մէջ յոյս տեսաւ յուշատարը Սուլթանին՝ *Ապտուլ Համիտի Նախըրա Տեֆթիերի* խորագիրով, որուն հայերուն վերաբերող հատուածներուն համար տես՝ Լեւոն Վարդան, «Գագանը որ խօսեցաւ», *Զարթօնք*, 21-24 Սեպտեմբեր 1977: Իսկ *Նորա ունա Չուա*ի հրատարակածներուն հայերէն մէկ բարգաւա-

- նուրեան համար տես՝ «Սուրբան Ապոխիւ Համիտ Բ.-ի յուշերն ու մտածումները», Եազընեան, էջ 811-836:
153. Վարդեան, էջ 126:
154. Հետաքրքրական է Պոլսոյ մէջ երկակիութիւնը հնչական ղեկավարութեան: Այսուհանդերձ՝ անոնց փոխյարաբերութեան համար տես՝ Առյժ, էջ 133, եւ Լեւոն Չորմիսեան, *Համապատկեր Արեւմտահայ Մէկ Դարու Պատմութեան*, Հտ. Բ. (1878-1908), Պէյրութ, 1974, էջ 260:
155. *Ըստ Վարդեանի՝ եզրակոչում: Տես՝ Վարդեան, էջ 126:*
156. *Ճանկիւլեան, էջ 171-172:*
157. *Վարդեան, էջ 126:*
158. *Papers*, 1896, p. 1318.
159. Խօսքը բարեկրթութեան մասին Մալիսեան Մրագիրին մասին է:
160. Մով, «Նամակ, 1 Նոյեմբեր 1895», էջ 271:
161. Օգանեան, էջ 161:
162. Վարդեան, էջ 125:
163. Ըստ Էսատ Ուրասի՝ Պէյրութի Գեղարուեստից Վարժարանի ուսանողուի: Տես՝ *Uras*, s. 484.
164. Ընդգծումը կը պատկանի Ճանկիւլեանին:
165. Ճանկիւլեան, էջ 172-173: Բաղդատ՝ Կիտուր, Ա., էջ 156:
166. Ատ. Խաչ-Պապեան, «Նամակներ Կ. Պոլսից», նամակ՝ 6 Հոկտեմբեր 1895, *Մուրճ*, Ե. տարի, բիւ 11, Թիֆլիս, Նոյեմբեր, 1895, էջ 1513-1514: Ասկէ ետք կը նշուի որպէս Խաչ-Պապեան, «Նամակ՝ 6 Հոկտեմբեր 1895»:
167. Վարդեան, էջ 127:
168. Ընդգծումը կը պատկանի վկայութեան:
169. Խաչ-Պապեան, «Նամակ՝ 19 Սեպտ. 1895», էջ 1306:
170. Մով, «Նամակ Կ. Պոլսէ, Հոկտ. 15, 1895», *Հայր*, Ե. տարի, բիւ 20 (107), Նիւ Եորք, 19 Նոյեմբեր 1895, էջ 255: Ասկէ ետք կը նշուի որպէս Մով, «Նամակ՝ 15 Հոկտ. 1895»:
171. Վարդեան, էջ 126:
172. *The Halifax Herald*, 5 October 1895, p. 4.
173. Այսինքն՝ կէսօրէն առաջ ժամը 11:30-ին:
174. Մով, «Նամակ՝ 2 Հոկտեմբեր 1895», էջ 271:
175. *The Halifax Herald*, 4 October 1895, p. 4.
176. Ընդգծումը նամակագիրինն է:
177. Խաչ-Պապեան, «Նամակ՝ 19 Սեպտ. 1895», էջ 1306-1307:
178. Այս եւ յետագայ ընդգծումները կը պատկանին նամակագիրին:
179. Ատ. Խաչ-Պապեան, «Հայկական մեծ ցոյց եւ կոտորածներ Կ. Պոլսում, Նամակ՝ Կ. Պոլիս, 24 Սեպտեմբեր 1895 ք.», *Մուրճ*, Ե. տարի, բիւ 9-10, Թիֆլիս, Սեպտեմբեր-Նոյեմբեր, 1895, էջ 1310: Ասկէ ետք կը նշուի որպէս Խաչ-Պապեան, «Նամակ՝ 24 Սեպտ. 1895»:
180. Հէվըրիի Կարօն, էջ 40:
181. Վարդեան, էջ 126: Տես նաեւ՝ Խաչ-Պապեան, «Նամակ՝ 19 Սեպտ. 1895», էջ 1307, եւ *The Halifax Herald*, 4 October 1895, p. 4:
182. Ոստիկանները:
183. Հանրակատրի:
184. Ըստ անգլիական Փոսթ օրաթերի Պոլսոյ բոլորակիցին՝ շերտ ոստիկան-գիւնդներ ձերբակալելու վրան էին Սուրբանի պալատի դուռին մտնողները հայերը՝ ուր սկսան տակնուվրայութիւնները, երբ փամփուշտներ

սկան արձակուիլ ուսանողներու [սոֆթաներու] ամբոխէն եւ գոյգ սպաներն սպաննուեցան, [եւ] կարգ մը այլ ոստիկան-զինուորներ վիրաւորուեցան: Կ'ըսուի թէ ուրքը հայեր սպաննուեցան վարչապետարանին մէջ»:
Տես՝ *The Halifax Herald*, 4 October 1895, p. 4:

185. Մեծ չափի ստրնանակ:
186. Հէվըրհիլի Կարօն, էջ 40-43:
187. Շահպագ, էջ 62:
188. Զինուորները:
189. Վրացեան, Ա., էջ 220: Տես նաեւ՝ *Քուուցիկ Քերթ*, թիւ 1, էջ 16:
190. Մահմետական օրէնագիր, կամ կրօնական ուսանող, որ ծանօթ է նաեւ *սոֆթա* անունով:
191. *Affaires Arméniennes*, p. 139-140.
192. Հոս ակնբերել է տպագրական սխալը բուականին, որ գուցէ արդիւնքն է Քիւմուրան Կիրիւնի անփութութեան:
193. Ֆրանսական *Դեղիս Գիրքը* չի տար այս խնդրագիրը, որուն հայերէն մէկ բարգմանութեան համար տես՝ *Ճանօթ*. թիւ 77-82 ներառեալ:
194. Պոլսոյ օտար ղեկավարութիւններու բաղամասը:
195. Պիտի ըլլայ՝ Աեմետի:
196. Քիւմուրան Կիրիւն՝ որուն մէկ գործէն կը վերցնենք այս փաստաթուղթը՝ կը ձգէ բազմաթիւ բացատներ անկէ ներս՝ այդ ձեւով ձերբագատելու համար գայն բուրքին աննպաստ եղող արտայայտութիւններէ: Այդ բացատները հոս կը տրուին բազմակէտերով: Կիրիւն կը վերցնէ գայն ֆրանսական արխիւներէն, ուր անիկա կ'իյնայ *A A E F, Turquie*, vol. 524, folio 39 համարին ներքեւ: Փաստաթուղթին համար տես՝ *Gürün*, p. 181-183:
197. Այսինքն՝ ցոյցը:
198. *Papers*, 1896, p. 1318.
199. Ըսել կ'ուզուի՝ Հայոց պատրիարքարանին:
200. *Papers*, 1896, pp. 1318-1319.
201. Պիտի ըլլայ՝ Աեմետի:
202. Այսինքն՝ ցուցարարներու խումբը:
203. *Affaires Arméniennes*, p. 141.
204. Ակնբերել է տպագրական սխալը: Բոլոր Սերվէրներն ալ պիտի ըլլան Սերվէր:
205. Կիրիւն փաստաթուղթը կը վերցնէ անգլիական արխիւներէն, որ կ'իյնայ *FO, 424/184, N° 36* համարին ներքեւ: Անոր համար տես՝ *Gürün*, p. 183:
206. *FO, 424/184, N° 3*, տես նաեւ *Gürün*, p. 183:
207. *FO, 424/184, N° 5*, տես նաեւ *Gürün*, p. 183-184:
208. Johannes Lepsius, Albrecht Mendelssohn Bartholdy und Friedrich Thimme, *Die Grosse Politik der Europäischen Kabinette, 1871-1914*, 10 Band, *Das Türkische Problem*, 1895, Berlin, 1927, s. 66-67.
- 208ա. *Das Türkische Problem*, 1895, s. 68.
209. Սուլթանական հրամանագիր:
210. Մահմետական աստուածաբանական ուսանող:
211. Ճանկիւլեան, էջ 173:
212. Զորմիսեան, էջ 260:
213. Զինեալ եւ անկանոն բուրք խաժամուծ, որ կը հետեւի բանակին եւ կը հետամտի կողոպուտի եւ աւարի ենթարկելու հակառակորդը, եւ ի պահանջելու հարկին՝ նաեւ սպաննել:

214. Մով, «Նամակ՝ 2 Հոկտեմբեր 1895», էջ 271-272:
215. Անգլիական Փոսթ քեյթի Պոլսոյ թղթակիցն ալ կը յայտնէ թէ «ըստ կարգ մը յուրերու՝ անկա անուամարկեց հայերը»: Sbu՝ *The Halifax Herald*, 4 October 1895, p. 4:
216. «Հեռագրական յուրեր Կ. Պոլսոյ ժխորման մասին», *Հայր*, Ե. տարի, թիւ 18(105), Նիւ Եորք, 15 Հոկտեմբեր 1895, էջ 256-257: Ասկէ ետք կը նշուի որպէս «Հեռագրական յուրեր», *Հայր*, 15 Հոկտ. 1895:
217. Խաչ-Պապեան, «Նամակ՝ 19 Սեպտ. 1895», էջ 1307-1308:
218. Պիտի ըլլայ՝ հայերէն:
219. Ատ. Խաչ-Պապեան, «Նամակներ Կ. Պոլսից», նամակ՝ 29 Սեպտեմբեր 1895, *Մարտ*, է. տարի, թիւ 11, Թիֆլիս, Նոյեմբեր, 1895, էջ 1509-1510: Ասկէ ետք կը նշուի որպէս Խաչ-Պապեան, «Նամակ՝ 29 Սեպտ. 1895»:
220. Պոլսոյ մաւաշինարանի մաւահանգիստը:
221. Danishmend, s. 334-335.
222. Պիտի ըլլայ՝ երկաթ:
223. Խաչ-Պապեան, «Նամակ՝ 19 Սեպտ. 1895», էջ 1307:
224. Բաղդատէ՝ Հէվրիի Կարօն, էջ 44:
225. Խաչ-Պապեան, «Նամակ՝ 24 Սեպտ. 1895», էջ 1310-1311:
226. Ըստ Խաչ-Պապեանի՝ «Սոֆթան Պոլսոյ մէջ այն ազդեցութիւնն ունի հիմա՝ ինչ որ հարիւր տարի առաջ *հեթըրիները*: Այս փաթեթագրութիւնները, Մուսամ-մետի կրօնին այս վարդապետները, հայերու դէմ չափազանց ատելութիւն ունին ու միշտ առիթ կը փնտռեն *կեաւութիւնները* բնաջինջ ընելու համար: Տարիէ մը ի վեր գէնքեր կը հայրայրէին, բայց չյաջողեցան մինչեւ հիմա որքէն առիթ մը գտնել՝ իրենց կարողութեանց յագուրդ տալու համար: Առիթը ահա ներկայացաւ»: Sbu՝ Խաչ-Պապեան, «Նամակ՝ 19 Սեպտ. 1895», էջ 1307: Իր կարգին՝ դէպքերուն ականատես եւ ժամանակակից ամերիկացի միսիոնար Կրիմ կը գրէ գրեթէ նոյն օրերուն, թէ «եղչակեան հայերը մէկ կողմէն եւ մահմետական *սոֆթանները* միւսէն՝ երկար առնէ ի վեր կը սպասէին կոիւի մը ստեղծումին: [Օսմանեան] Կայսրութեան իրագործելի բարեկարգումներուն համար երկար սպասելէն՝ հայերը մղուեցան յուսահատութեան: Կրկին ու կրկին ըսեր էին անոնք, թէ ոչ մէկ յոյս կար՝ մինչեւ որ հրապարակ գար այսպիսի խոռվութիւն մը, որ ստիպէր մեծ պետութիւնները միջամտելու: Իրենց կարգին՝ *սոֆթաններն* աւելիով էին զրգուած Թուրք Կայսրութեան մասնատումի խօսքերէն եւ կորուստէն Օսմանեան կայսրութեան վարկին»: Sbu՝ Greene, pp. 256-257:
227. *Րեֆորմ*՝ բարեկարգում, *պետիցիա*՝ աղերսագիր:
228. «Նոր սարսափներ — Երզնկա եւ Պոլիս», *Դրօշակ*, թիւ 15-16, 15 Հոկտեմբեր 1895, էջ 2:
229. *Affaires Arméniennes*, p. 148.
230. 30 Սեպտեմբեր 1895:
231. Կակնարկուի Սուլթան Ահմետի դամբանին:
232. Մահմետական կրօնական դպրոց. աստուածաբանական ճեմարան:
233. Շէյխէն աստիճան մը վար գտնուող մահմետական կրօնական եւ ուսուցիչ:
234. Կակնարկէ *սոֆթաններուն* եւ *մուլաններուն*, որոնցմէ, ըստ Թեքին Ալփի, Ապտիլ Համիտի օրերուն «կայիմ քանի մը հազար եւ կը կազմէին յետ պատերազմեան կարեւոր զանգուած մը»: Sbu՝ Tekin Alp, *The Turkish and Pan-Turkish Ideal*, London, [n.d.], p. 31:

235. Երլուրզի արխիմեռնե վերցնելով այս փաստաթուղթը՝ Մեհմետ Հոնաօղլուն գայն կը գեանդէ իր գիրքէն ներս բազմաթիւ այլ փաստաթուղթերու հետ, միայն թէ փաստաթուղթին մէջ անհկա կու տայ *էրթապը Փեսաթ* բացատրութիւնը, որ վստահօրէն տպագրական սխալ մըն է. ճիշդ ձեւը պիտի ըլլայ *էրպապը Փեսաթ*, որ կը նշանակէ չարագործ մարդեր: Ասկէ անմիջապէս ետք Հոնաօղլուն փակագիծի մէջ կու տայ *Իհթիլալըլար*՝ յեղափոխականներ բացատրութիւնը: Թարգմանութեան մէջ նախընտրեցինք օգտագործել այս վերջինը:
236. Այսինքն՝ մինչեւ կէս գիշերուան ժամը 11-ը:
237. Hocaoglu, s. 220-222.
238. Ճանկիւլեան, Գ., էջ 173-174:
239. *The Halifax Herald*, 5 October 1895, p. 4.
240. Կիտուր, «Ցոյցերը», էջ 141-142:
241. «Report, December 19, 1895», p. 1264.
242. Uras, s. 487. տես նաեւ՝ *Affaires Arméniennes*, p. 139:
243. Uras, op. cit. տես նաեւ՝ Hocaoglu, s. 228:
244. Թիֆլիսի *Մուրճ* ամսագիրին խմբագրութիւնը կու տայ սակայն այլ բարգձմանութիւն մը ֆրանսերէնէ կատարուած: Ըստ անոր՝ «այսօրայ լրագիրներում տպուած մի ծանուցումն տեղեկացրեց թէ ինչպէս երեկ ցրիւ տրեցին մի քանի հայերի հաւաքումները:
«Նո՛ւա, որոնք այս խմբումների մէջ գէնքը ձեռքին ընդդիմադրեցին ժանտարմաներին, բնական է որ կալանաւորուեցին: Նո՛ւա դատի կը կոչուին եւ կը պատժուեն օրէնքի համաձայն եւ նշանակուած պատիժների մասին կը հրատարակուի լրագրերում:
«Այսու ծանուցում է, որ Հ.Կ.Մ. Սուլթանի բոլոր հպատակները, մահմետական թէ ոչ-մահմետական, ինչ դասակարգի կը պատկանեն նո՛ւա, պարտաւոր են իրենց պարտականութիւնը կատարել. այն ամէնքը, որոնք օրէնքին հակառակ կ'երբան, մեծ պատասխանատուութեան կ'ենթարկուին եւ պատշաճ պատիժը կը կրեն»: Տես *Մուրճ*, է. տարի, թիւ 9-10, Սեպտեմբեր-Հոկտեմբեր, 1895, էջ 1309-1310:
245. Hocaoglu, s. 228. տես նաեւ՝ Uras, s. 447:
246. Ismail Kemal Bey, *The Memoirs of Ismail Kemal Bey*, London, 1920, p. 264, as cited in Vahakn N. Daderian, «The role of the Turkish military in the destruction of Ottoman Armenians: A study in historical continuities», *Journal of Political and Military Sociology*, vol. 20, N° 2 (Winter), 1992, p. 261.

Լ. Վ.

THE ARMENIANS OF CONSTANTINOPLE,
THE SUBLIME PORTE, AND OTHER THINGS
(The Armenian Manifestation at the Sublime Porte,
30 September 1895)

SUMMARY

LEVON VARTAN

This is the second installment of an all-inclusive study pertaining to the manifestation of the Armenians of Constantinople on the 30 September 1895, to present a petition and thereby ask the Sublime Porte to ameliorate the lot of the Armenians in the Ottoman Empire in general, and in the six Armenian provinces of Western Armenia in particular. The section presented here deals only with the first day of the «troubles» and «clashes» between the Ottoman regular and irregular forces and the *softas* on the one side, and the Armenian demonstrators on the other, their repurcussions on various «fronts», the several reports of the English, French, American and German ambassadors in Constantinople, the official reports of the Ottoman authorities, the declarations made by the Sublime Porte, and a number of sundry telegrams, western and Armenian newspaper reports and articles, a number of memoirs of both foreign and contemporary individuals and participants to the events, and a multitude of forgeries of the modern Turkish historiography. Moreover, it tells at length the blood-soaked story of the massacres which occurred in the different quarters, squares and regions of the Ottoman capital. Quite sure, the story of the Armenian manifestation does not come to an end with what is presented here. The rest of the article which will complete the story of the movement will be given in the next issue of the *Haigazian Armenological Review*.